№ 284 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 284

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE
VENISE S. LAZARE

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի։
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելէֆոն № 67

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ **1916** Թ. ՀԱՄԱՐ

(45-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	Այնուհետեւ ամսական ՄԷԿ ռուբլի։
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 12 ռուբլի։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամականիշ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՍՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սրանով յայտնում ենք, որ **„ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԹԱԿԱՆ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԻՒՐՕՅՈՒՄ“** արձանագրված են անգործ գաղթականները, որոնց մէջ կը գտնվեն ամէն տեսակ արհեստաւորներ, գործակատարներ, ուսուցիչներ, դպրոցականներ, բանւորներ և գիւղացիներ։

Կոչ ենք անում բոլոր գործարանատէրերին, արհեստանոցներին, վաճառականներին և տնատէրերին, որ փութան իրանց ծառայութեան մէջ առնել նրանց։

Մեր գրասենեակը բաց է ամէն օր առաւօտ ժամը 10—3-ը և երեկոյ ժ. 7—8-ը։
Մեր հասցէն՝ «Պուշկինսկի պասսաժ» № 20.

939. 2—2 Գաղթականներին գործ հայթայթող Յանձնաժողով

ԿՈՉ

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ“, ստանալով Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի օրհնութիւնը և հաճութիւնը ու պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութիւնը, իրան նպատակ դրած լինելով ըստ առաջին հերթի նպաստել Վասպուրական նահանգի վերաշինութեան գործին և հայ կամաւորական միլիցիայի պահպանութեան, որ պէտք է պաշտպանէ տեղական ժողովուրդը աւարառութիւններից և աւազակութիւններից,—սրանով կոչ է անում հայ գիտակից և հայրենասէր հասարակութեանը՝ աջակցել իրան՝ գլուխ բերելու այդ կարեւոր և շինարար գործը։

Թող այս անգամ եւս, ինչպէս և միշտ, հայ ունեւորի ռուբլիներին միանան և չքաւոր հայ ժողովրդի լումաները և թող այս շինարար գործը նկատվելով ժողովրդական՝ հայ ժողովրդի ամեն մի անհատ չը խնայէ իր փոքրիկ լուման ձգելու ազգային այդ շինարար գանձանակի մէջ։

Դրամական նուէրները կարելի է ուղարկել կամ ուղղակի Յանձնաժողովի նախագահ Դաւիթ-խան Աւան-Իւզբաշեանի հասցէով՝ (Тифлисъ, ул. Петра-Великаго, собст. домъ, Давиду Богдановичу Аванъ-Юзбашеву Хану Сакнакскому), կամ գանձապահ Ալ. Մելիք-Ազարեանցի (Тифлисъ, Лермонтовская ул. соб. домъ) և կամ «Մշակի» միջոցով։

Նախագահ Յանձնաժողովի՝ Դաւիթ-խան Աւան-Իւզբաշեան
Փոխ-նախագահներ՝ Հ. Առաքելեան, բժշկ. Բ. Նաւասարդեան
Անդամ-գանձապահ՝ Ալ. Մելիք-Ազարեան
Անդամներ՝ Միք. Արամեան, Յ. Պարեան, Միք. Աթաբէկեան, Աւչ. Խաչատրեան, Ստեփան Սուլխանեան, Աւետիք Նզեկեան, Ստ. Մալխասեան (քարտուղար), Մ. Մինասեան։

(օ. մ.) տ. 915. 10—5

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
նախագահ Ա. Սահակեանի խմբագրութեամբ և հրատարակութեամբ

„ԳԻՒՂԱՏՆՏԵՍ“

երկշաբաթաթերթն առաջիկայ 1916 թւականի ընթացքում լոյս կը տեսնի կանոնաւորապէս երկու շաբաթը մի անգամ, իւրաքանչիւր ամսի 15-ին և 30-ին։

«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻՆ» աշխատակցելու են առաջիկայ տարվանից հետեւեալ անձինք. պ. պ. Արովեան Ս., Աղաբալեան Յ., Աղասարեան Բ. բժ., Աթմաճեան Ա., Ալիբէգեան Գ., Աւագեան Ա., Աֆրիկեան Կ., Բալոնց Մարգար, Բաղրամեան Բ., Բարխուդարեան Ս., Գեօզալեան Տ., Գրձելեան Գ., Դիլանեան Խ., Երիցեան Խ., Զաւրեան Դ., Զուրաբեան Ս., Թադէոսեան Ա., Թամամշեան Ա., Թամամշեան Վ., Ղազարեան Յ., Խանազեան Ա., Խարազեան Գ., Կամսարական, Կամսարական Ս., Կարապետեան Յ., Համբարձումեան Կ., Ղազանճեան Վ., Մելիք-Բախտամեան Յ., Միրզայեան Յ., Մխիթարեան Ա., Մկրտումեան Բ., Մուշկեան Մ., Յարութիւնեան Մ., Նարինջեան Խ., Նաւասարդեան Մ., Չուխեան Հ., Պապովեան Գ., Ռոստոմեան Գ., Սահակեան Ս., Սարուխանեան Աւ., Սիմէօնեան Ն., Վարաժեան Ե., Տէր-Օհանեան Յ., Տիրատուրեան Ս., Տօտոմեան Վ., Փիրալեան Յ., Քալանթար Աւ., Օթարեան Ն.։

«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԸ» կը տայ 1916 թւականի ընթացքում իր տարեկան բաժանորդներին մի քանի գիւղատնտեսական գրքոյկներ և բրօշիւրներ, իբրև պրեմիա։

Տարեկան բաժանորդագինն է 3 րուբլի։

Պէտք է դիմել՝ Тифлисъ, Контора Армянскаго Сельскохозяйственнаго Общества для журнала «ГЮХАТНТЕСЪ».

Առաջին համարը լոյս կը տեսնի յունվարի 15-ին։

տ. (և.) 918. 5—3

Թոքերի հիմնարկի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՕԹՕՐԱՔՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ տր ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7-92.

(տ. օ.) 896. 100—15

ԲԺԻՇԿ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ յատկապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով։

Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7-ը։

Бебутовская ул. № 26. 3-րդ արական գիմնազիայի կողքին։

տ. 779. 50—46

Թիֆլիսի Ժողովարան

Չորեքշաբթի, դեկտեմբերի 23-ին
Հայ Դրամա-Օպերէտային Առաջին
Դերասանական Ընկերակցութիւնը
հասարակութեան խնդրանօք դարձեալ մի անգամ կը ներկայացնի մեծ ընդունելութիւն գտած

ԱՍԻԱԿԱՆ ՈՒՐԱԽ ՕՊԵՐԷՏ

ՆԱ ՉԸ ԼԻՆԻ— ՍԱ ԼԻՆԻ

(Մաշտի Իպատ)

3 գործ. Ուզէիր-Բէգի, թարգմ. Ս. Կարապետեանի։
Արևելեան երաժշտախումբ
Թարգմանչի ղեկավարութեամբ
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Տեղերի գները 3 րուբլուց մինչև 75 կ.։
Տոմսակ վերցնողը մուտքի համար առանձին չէ վճարում։
Խմբի լիազօրներ՝
ԹՈՐՈՍԵԱՆ, ՂԱԶԱՐԵԱՆ և ՓԻՐՈՒՄԵԱՆ
Ներկայացման կարգադրիչ՝
Ա. ԵԼԻԶԲԱՐԵԱՆ

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պօսնէրի։

Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի եւ կաշուի հիւանդութիւններով՝ առաւ. ժամը 10—12, երեկ. ժամը 4—6։ Սօլօլակ, Բուլչեևսկայա փող. սեփ. տուն, № 1, հրշեհաշէջների բնակատեղի դիմացը, տելեֆոն 10—58.

տ. (չ. ու. կ.) 806. 50—20

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԵՒ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ
ԿԷՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, փարփորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթօդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պերէուլկից։

(տ. օ.) տ. 515. 100—100

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
21 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատ.

Սև ծովի ափի շրջանում լոյս դեկտ. 19 ի գիշերը թիւրքերը փորձեցին մօտենալ մեր դիրքերին, բայց մեր կրակը կանգնեցրեց նրանց։

Պարսկաստանում, Համադանի ուղղութեամբ, Ասադ-Աբադ քաղաքից դէպի հարաւ-արեւմուտք մենք յարձակում գործեցինք պարսկական 500 ժանդարմի վրա և վանեցինք նրանց դէպի Զինար գիւղը, որ գտնվում է Կանգավէր քաղաքից դէպի հիւսիս։ Այս կռւի մէջ սպանվեցին մի քանի տասնեակ ապստամբներ և գերի ընկան մի քանիսը։ Մենք մարդկային կորուստ չունեցանք։

Դեկտ. 19-ին մեր զօրամասերից այն, որ գտնվում էր Համադանում, համապատասխան արարողութեամբ պատիւ տուեց անգլիական դրօշակին, երբ այդ բարձրացնում էին անգլիական հիւպատոսարանի վրա։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ. — Մեր նաւատորմի ռազմանաւերը Սև ծովի ափի մօտ հանդիպել և ընկղմել են թիւրքական մի մեծ շոգենաւ ապրանքով լի։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
21 դեկտեմբերի

ԱԹԵՆՔ.—Սոլունից ստացված տեղեկութիւնների համաձայն, դաշնակիցները նորից կալանաւորել են մօտ 100 գերմանական, աւստրիական, թիւրքական և բուլղարական հպատակի։

Կարծում են, որ սերբիական թագաւորը այստեղ կը մնայ մի քանի օր միայն։

Յունաց կառավարութիւնը բողոքեց կենտրոնական պետութիւնների առաջ գերմանական աէրօպլանների արշաւանքների դէմ։

ՑԵՏԻՆԻԷ.—«Պրէսս Բիւրօն» յայտնում է.

Դեկտ. 19-ին հիւսիսային զօրաճակատի վրա տեղի էր ունենում թնդանօթային կռիւ։

Արևելեան զօրաճակատի վրա՝ Մոնժովայի ուղղութեամբ տեղի էին ունենում կռիւներ առաջապահ զօրախմբերի միջև և թոյլ թնդանօթաձգութիւն։

Թշնամին յարձակում գործեց մեր դիրքերի վրա Կոզուէվի մօտ, բայց անաջող և կրեց ծանր կորուստներ։

Մնացած զօրաճակատի վրա շարունակվեցին թնդանօթային ու հետիոտն կռիւներ։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
21 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Չարտօրիյսկի շրջանում և վերին Ստրիպի մօտ մենք վանեցինք թշնամուն, որ փորձում էր մօտենալ մեր խրամատներին, ըստ որում թշնամին կրեց խոշոր կորուստներ։

Չերնովիցից դէպի հիւսիս-արեւելք կռիւը շարունակվում է նախկին եռանդով. Մեր զօրամասերը, չը նայած հակառակորդի բազմաթիւ հակայարձակումներին, շարունակ առաջանում են։ Թշնամու կորուստները մեծ են։ Մենք նորից գերել ենք 16 օֆիցէր և 766 զինուոր. բացի դրանից մենք վերցրել ենք բազմաթիւ վիրաւորներ կռւի դաշտից։

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Լոյս դեկտ. 19-ի գիշերը թշնամին մի քանի անհաջող յարձակումներ գործեց Մօրնի մօտ, Լագարինօ հովտում, բայց բոլոր յարձակումները մենք վանեցինք հեշտութեամբ։ Կարսօյում մեզ աջողվեց ձեռք ձգել մի քանի գերիներ, զէնք ու ռազմամթերք։

Դեկտ. 19-ին թշնամու աէրօպլանները ռումբեր նետեցին Մարկօյի վրա, նաև Սարինոյում ու Բօրգօյում, բայց վնաս չը պատճառեցին։

ԼՈՆԴՕՆ.—Անգլիական գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Զօրաճակատի վրա սովորական հրաձգութիւն է։ Թշնամին մի ական պայթեցրեց Ժիվանշիում, բայց չը փորձեց գրաւել պայթումից առաջացած փոսը։ Մենք պայթեցրինք 3 ական։

ԼՈՆԴՕՆ. — Ռէյտէրի գործակալութեանը հաղորդում են Կահիրէից, որ «Պերսիա» շոգենաւը ջրասուզվել է առանց նախազգուշացման։

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Ճշգվում է, որ հիւպատոս Մակնիլըն խեղդվել է։

ԲՈՒԼՂԱՐ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՍՕՖԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
20 դեկտ.

ԲՈՒԽԱՐԷՍՏ. Սօֆիայից հաղորդում են. Դեկտ. 16-ին պալատում կայացաւ խորհրդակցութիւն Ֆերդինանդ արքայի նախագահութեամբ և նրա որդիների, Մակենզենի և նրա շտաբի, գնդապետ Սոնէյտի, գերմանական զինուորական գործակալ ֆոն-Մասսովի, գլխաւոր զօրահրամանատար Ժէկօվի, 1-ին և 2 դ. զօրաբանակների հրամանատարներ Բօյաջեվի և Տօդօրովի և գլխաւոր շտաբի պետ Լօստովի մասնակցութեամբ։

Այդ նիստին ներկայ չէին զինուորական մինիստր Նայդէնօվը և կաբինէտի բոլոր անդամները։

Խորհրդակցութեան նպատակն էր՝ վերացնել Սոլունի դէմ բուլղար-գերմանական ընդհանուր գործողութիւններ սկսելու հարցի առիթով ծագած տարաձայնութիւնները։

Գերմանասէրների շրջանում պնդում են, որ Ֆերդինանդ արքան, լինելով համակարծիք Մակենզենի հետ, կը ստիպէ բուլղար կառավարութեանը ենթարկվել գերմանական պահանջներին՝ անմիջապէս դէպի Սոլուն արշաւանքի ձեռնարկելու մասին, և հեգնանքով կը վերաբերէ դէպի բուլղար կառավարութեան ցանկութիւնը՝ ապահովել բուլղար ժողովրդի շահերը տերրիտորիալ բնոյթի վարձահատուցումներով այն ահագին զոհերի պատճառով, որ կը պահանջէ բուլղարներից դէպի Սոլուն նախագծված արշաւանքը։

Միւնոյն օրը Մակենզենը մեկնել է Սօֆիայից։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
21 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — «Нашъ Вѣстникъ»-ում դեկտ. 21-ի համարի մէջ տպված է.

Գերագոյն Զօրահրամանատար Նորին Կայսերական Մեծութիւնը դեկտ. 20-ին զօրքին գրելու ժամանակ բարեհաճեց դիմել Գէորգեան ասպետներին հետեւեալ խօսքերով.

Ձեզ, ինչպէս մեր զօրքի ամենաքաջ ներկայացուցիչներից, դիմում եմ Ես սրտագին ու խորին շնորհակալութեամբ՝ այս պատերազմի մէջ ցոյց տուած ձեր արի ու պանծալի ծառայութեան համար և խնդրում եմ ձեզ հաղորդել ձեր ընկերներին Իմ ջերմ շնորհակալութիւնը այն ծանր ծառայութեան համար, որպիսին նրանք կրում են և որպիսին գնահատում է ամբողջ Ռուսաստանը և Ես։

Մի վրդովվէք։ Ինչպէս ասել եմ պատերազմի սկզբում, Ես չեմ կնքի հաշտութիւն, մինչև մենք չարտաքսենք թշնամու վերջին զինուորին մեր երկրի սահմաններից, և չեմ կնքի այդ հաշտութիւնը այլ կերպ, բայց միայն մեր դաշնակիցների հետ լիովին համաձայնութեան գալով, դաշնակիցների, որոնց հետ մենք կապված ենք ոչ թէ թղթի պայմանագրերով, այլ իսկական բարեկամութեամբ ու արիւնով։

Ես չեմ մոռանայ այս զօրադիտումը և ուրախ եմ, որ Ինձ աջողվեց տեսնել զօրքի քաջարի մասերին և յանձին ձեր խնդրում եմ Իմ շնորհակալութիւնը յայտնել բոլոր զօրքերին նրանց հաւատարիմ ծառայութեան համար, որ ուրախութեամբ է լցնում Իմ սիրտը։

Թող Տէրը պահպանէ ձեզ, պարոններ։

Արտասահմանեան նոր-տարվայ առիթով Թագաւոր Կայսրը դիմեց ֆրանսիական հանրապետութեան նախագահին հետեւեալ հեռագրով.

Նոր-տարվայ շեմքին Ինձ առանձնապէս հաճելի է, պարոն նախագահ, արտայայտել ձեզ Իմ անկեղծ շնորհաւորանքները և Իմ լաւագոյն բարեմաղթութիւնները, նաև ցանկանալ երջանկութիւն ու բարգաւաճում Ֆրանսիային, Իմ երկրի հաւատարիմ բարեկամին ու քաջարի դաշնակցին։

Ընդ սմին Ես խնդրում եմ ձեզ հաղորդել պանծալի ֆրանսիական զօրքին Իմ ամենասրտագին բարեմաղթութիւնները, որոնցով հանապազ բաբախում է Իմ սիրտը։

Անյողդողդ հաւատացած մեր ընդհանուր գործի յաղթանակին, Ես յոյս ունեմ, որ մեր միացեալ ջանքերը մօտիկ ապագայում կը պսակվեն վճռական աջողութեամբ։

Թագաւոր Կայսրի այդ հեռագրին նախագահը պատասխանեց հետեւեալ դարձուածքներով.

«Ֆրանսիական զօրքը չափազանց երախտապարտ է լինելու Ձերդ Մեծութեանը շնորհաւորանքների ու բարեմաղթութիւնների համար։ Նա քաջարի ռուս զօրքի հետ միասին հպարտութեամբ է կռւում յանուն Եւրոպայի իրաւունքների պաշտպանութեան և համակված է հաստատ վճռով՝ կռւել մեր հաւատարիմ դաշնակիցների հետ միասին մինչև վերջ, այսինքն մինչև լիակատար յաղթութիւնը։

«Ես խնդրում եմ Ձերդ Մեծութիւնից ընդունել իմ լաւագոյն բարեմաղթութիւնները. լինէք Դուք և ամբողջ Կայսերական Ընտանիքը երջանիկ։ Թող բարգաւաճի Ռուսաստանը. Ռայմոնդ Պուանկարէ»։

Գլխաւոր պարենաւորման վարչութիւնը բացատրում է, որ «ընտանիք» խօսքի տակ պէտք է հասկանալ ոչ միայն պատերազմի գնացած զինուորականների կանանց և երեխաններին միայն, այլ և հայրերին, մայրերին, եղբայրներին և քոյրերին, եթէ նրանք ապրում էին նրանց հետ մինչև պատերազմ գնալը. ուստի և այդ բոլոր անձինք հանդիսանում են ընտանիք պատերազմի գնացած ամուսնու, որդու, հօր և եղբօր վերաբերութեամբ, որոնք իրանց հերթին հանդիսանում են նրանց ներկայացուցիչները՝ սակայն ամեն մի ընտանիք կարող է ունենալ միմիայն մի զինուորական ներկայացուցիչ։

ՑԵՏԻՆԻԷ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ մինիստրութիւնը հրաժարական տուեց։ Միուշկովիչին յանձնված է կազմել նոր կաբինէտ։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ. Գերմանական լրագիրները նոր տարվայ առիթով քննում են հաշտութեան հարցը։ «Բերլ. Տագէբլատը» յոյս է տածում, թէ նոր տարուն հաշտութիւն կընկնի և Գերմանիան կը հասնէ այն նպատակներին, որոնց մասին խօսեց կանցլերը իր վերջին ճառի մէջ։ Բրեսլաւի համալսարանի պրոֆէսոր Հիլլեբրանդը գրում է «Կրէյց Ցայտունգի» մէջ. «Գերմանիայի ապագան ոչ թէ ջրի վրա է, այլ ցամաքի վրա։ Մեր հերոսների գերեզմանների վրա արևելքում և արևմուտքում պէտք է ծածանվի գերմանական դրօշակը»։ Սակայն, չը նայած այդ ռազմական յօդուածներին, մամուլը ցանկանում է շուտով հաշտութիւն լինի։ «Ֆօրվէրտսը» պնդում է, թէ «սօցիալիզմը, որ յոյս ունէր ազդել համաշխարհային դէպքերի վրա, չափազանցում էր իր ոյժերի նշանակութիւնը»։ Գերմանիայի խաղաղասէր տենդենցների առիթով լրագիրը ասում է. «Կենտրօնական պետութիւնների պատերազմական աջողութիւնը, բաղդված այլ զանազան ֆակտօրների հետ, առաջ է բերել հաշտութեան այնպիսի փափագ, որ նուաճողական պատրանքային ծրագիրների կողմնակիցների թիւը հասել է մինիմումի»։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՑՈՒՐՋԸ

◆ «Р. Инвалидъ»-ը գրում է, որ սկսած Պրիպետայի մօտից մինչև ռումինական սահմանը կռիւները զարգանում են և տեղ-տեղ ստանում են շատ տաք կերպարանք։ Մամուլի մէջ տակաւին չեն երևացել այդ ահեղ կռիւների մանրամասնութիւնները։ Բայց, դատելով գերմանական գլխաւոր բանակի պաշտօնական հաղորդագրութիւնից, երևում է, որ մեր զօրքերը լայն ռազմաճակատով ձեռնարկել են առաջխաղացման և գրոհ են տալիս դէպի Բեսսարաբիայի զօրաճակատը և դէպի Դնէստր։

◆ Ռազմագէտների ասելով, Ստրիպա գետի ձախ ափում գործողութիւնների նախաձեռնութիւնը մեր ձեռքումն է, իսկ հարաւային զօրաճակատի վրա գերակշռութիւնը գերմանացիների կողմն է։ Գերմանացիք շարունակում են խոշոր ոյժեր փոխադրել դէպի ռուսական զօրաճակատը։

◆ Հաագայից հաղորդում են, որ գեներալ Մակենզէնը Սօֆիայից անցել է Կ. Պօլիս։

◆ Բուխարեստից հեռագրում են, որ Ջէմալ-փաշան նշանակվել է Բալկաններում գործող թիւրք զօրքերի գլխաւոր հրամանատար։ Էնվէր-փաշան, լուրերի համաձայն, ղեկավարելու է թիւրքերի գործողութիւնները Եգիպտոսի դէմ։

◆ Աւստրո-ռումինական սահմանից հաղորդում են, որ Բուկօվինայի զօրաճակատի վրա խոշոր կռիւներ են։ Ռուսաց զօրքերը մօտենում են Չէրնօվիցին։

◆ Սոլունից հեռագրում են, որ դաշնակիցները սկսել են զօրք ափ հանել Կաւալայում։ Յունաստանը բողոքել։ Յունաստանը այս երկու օրս վերջնականապէս լուծելու է իր անորոշ դիրքը։ Վենիզելոսի կողմնակիցները ամեն ջանք գործ են դնում, որ Յունաստանը հանդէս գայ յօգուտ քառեակ համաձայնութեան, բայց ամեն տեսակ անակնկալ հնարաւոր է համարվում...

◆ Հռոմից յայտնում են, որ սենուսի ցեղը ապստամբվել և ձեռք է ձգել Եգիպտոսի մի մասը։

◆ «Б. В.»-ի ասելով, Գերմանիան 50,000 գերմանական զինուորական զգեստ և սաղաւարտ է ուղարկել Սօֆիա, որպէսզի Բօլգարիան շուտով հանդէս գայ Յունաստանի դէմ։

◆ Կիէվից հեռագրում են, որ Լիդա-Մօլոդէչնօ երկաթուղագծի շրջանում խորտակվել է գերմանական մի գնացք. սպանվել և վիրաւորվել են մօտ 1000 զինուոր։

◆ Աթէնքից հեռագրում են, որ գերմանօ-բօլգարական զօրքերի յարձակումը Սալօնիկի զօրաճակատի դէմ այս երկու օրում անխուսափելի է։

◆ Գերմանիայի պատերազմական ծախքերը առ 1-ն մարտի կազմում էին 70 միլիարդ մարկ։

◆ «В. В.»-ն հաղորդում է, որ Բեռլինում վերջին անկարգութիւնների ժամանակ համազարկներից և սուինային յարձակումներից սպանվել են 128 մարդ, վիրաւորվել են մօտ 1000 հոգի։

Ե՞ՐԲ ՀԱՆԴԷՍ ԿԸ ԳԱՅ ՌՈՒՄԻՆԻԱՆ

Ռումինիայի հանդէս գալու և նրա անելիք վճռական քայլերի մասին ռումինական մամուլի մէջ ոչ մի խօսք չի լինում։

Ընդհակառակը, մի շարք որոշակի յայտարարութիւններ են լինում այն մասին, որ վճռապէս հանդէս գալու րօպէն նորից չքանում է մշուշապատ ապագայի մէջ։

Այսպէս, օրինակ, Ռումինիայում շատ յայտնի ռազմագէտ, գեներալ Կրաինիչեանու գրում է «Ունիվերսալ» թերթում.

«Այժմ դրութիւնը փոխվեց և պատերազմի նոր ծրագիր է նկատվում։ Դանուբն անցկացած աւստրո-գերմանական զօրքի թիկունքը վտանգաւոր է։ Սերբիական զօրքը գրեթէ ոչնչացված է։ Ֆրանսացիները չը կարողացան բաւականաչափ ոյժեր հանել Սալօնիկ։ Իտալիան հանդէս չեկաւ Բալկաններում։ Ռուսաստանը տակաւին չի աւարտել իր հարաւային բանակի կենտրօնացումը։ Յունաստանը աշխատում է մնալ իր չէզոքութեան բնի մէջ։ Բօլգարական զօրքը, հաւանօրէն, կը հաստատվի սերբիական ռազմաբեմում և Յունաստան-Սալօնիկ գծի վրա, այն ժամանակ, երբ աւստրո-գերմանական զօրքը թիւրքերի հետ կը գրաւեն սպառնական ուղղութիւնների ռազմաբեմերը։ Այդ ճակատագրականութեան առաջ, որ մի հսկայ բռունցք կարող է գործել մեզ, մեր հանդէս գալը անխուսափելիօրէն պէտք է հեռու մնայ»։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Ամերիկական «New York World»-ի Կ. Պօլսի թղթակիցը նկարագրում է Թիւրքիայի ներկայ չափազանց մռայլ դրութիւնը։ Օսմանեան կայսրութեան մէջ այժմ քաղաքներ կան, որոնք միանգամայն զրկված են ազգաբնակութիւնից։ Առևտուրը կանգ է առել ամբողջ երկրում։ Ռազմի դաշտերում մինչև այժմ ընկել են 250,000 մարդուց աւելի։ Ոչ պակաս քան 300,000 զինուոր գտնվում են լազարէթներում։ Ազգաբնակութեան քանակը, որ զուրկ է ապրուստի որևէ աղբիւրից, երեք միլիոն ընտանիքից աւելի է։

Նիւ-Եօրկի թերթի թղթակիցը առաջ է բերում այն ճառի բովանդակութիւնը, որ թիւրքաց պարլամենտի բացման ժամանակ արտասանել է սենատօր Ահմէդ-Րիզա-բէյը, երիտասարդ-թիւրքերի 1908 թ.ի յեղաշրջման պարագլուխներից մէկը և թիւրքաց պարլամենտի նախկին նախագահը։

«Երկիրը պատերազմի մէջ քաշելով,—ասել է Ահմէդ-Րիզա-բէյը,—կառավարութիւնը գործեց բացառապէս Գերմանիայի շահերով։ Պատերազմի մի տարուց յետոյ մեր զօրքերը դեռ չեն նուաճել Կովկասը և չեն մտել Եգիպտոս, ինչպէս հանդիսաւորապէս խոստացաւ մեր կառավարութիւնը, սկսելով իր պատերազմական գործողութիւնները։ Մեր առաջխաղացումը դէպի Կովկաս անաջողութիւն կրեց։ Մեր զինուորական մինիստրի ղեկավարութեամբ թիւրքաց զօրքը այնտեղ կորցրեց 3 կօրպուս։ Մենք ոչ միայն չենք գտնվում ռուսաց հողում, այլև կորցրել ենք Արևելեան Անատօլիայի մի մասը։ Գալլիպօլի թերակղզին ծուղակ դարձաւ ոչ միայն անգլիացիների, այլև մեզ համար։ Մեր ազգաբնակութեան կիսից աւելին մեռնում է քաղցից։ Մեր միջոցները սպառված են, մենք աւերված։ Դուք յաղթական կամար էք կառուցում, որպէսզի ողջունէք կայզերի զինուորներին։ Այո, նրանք կարող են գալ, բայց ասացէք ինձ, դուք ինչ երաշխիքներ ունէք, որ նրանք երբևիցէ կը հեռանան այստեղից։ Ես վախենում եմ—դրա համար ես հիմք ունեմ—որ օսմանեան մեծ կայսրութիւնը դառնայ գերմանական գաղութ»։

Ահմէդ Րիզա-բէյը բողոքեց հայերին կոտորելու դէմ և յետոյ կանգ առաւ՝ այսպէս կոչված ազգային պաշտպանութեան կօմիտէի գործունէութեան վրա։

«Ովքե՞ր են այդ մարդիկ,—հարցնում է նա,—որ իրանց անուանում են ազգային պաշտպանութեան կօմիտէ և կողոպտում ազգաբնակութեան, ինչպէս հարստին, նոյնպէս և չքաւորին։ Ոչ մի առևտրական չի վրիպել նրանց ուշադրութիւնից։ Ստամբուլում և Պերայում խանութներից վերցված են միլիոնների ապրանքներ։ Վերցվել են և այնպիսի ապրանքներ, որոնք ոչ մի արժէք չեն ունեցել որպէս զօրքին պէտքական։ Այդ ապրանքները ուղարկվել են կօմիտէի անդամների տները»։

Ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյը բաւականացաւ միայն հետևեալ կարճ պատասխանով Րիզա բէյի ճառին.

«Կառավարութիւնը չէ կարող պատասխանել իրան առաջադրված հարցերին։ Բոլոր այդ հարցերը վերաբերում են արտաքին քաղաքականութեան։ Եւ այդ պատճառով նրանք չեն կարող բաց քննութեան ենթարկվել առանց վնասելու մեր մեծ և յաղթական կայսրութեան»։

Թղթակցի ասելով, Թիւրքիան այժմ կառավարում են մի քանի մարդիկ, որ գլուխ են կանգնած «Մ. և Առ.» կօմիտէին և միաժամանակ մտնում են մինիստրների կաբինէտի կազմի մէջ։ Երկու շաբաթը մի անգամ տեղի են ունենում կօմիտէի նիստերը, որի որոշումները անմիջապէս կեանք է մտցնում կառավարութիւնը, պարլամենտը և տեղական ադմինիստրացիան։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ
(Նոյեմբ. 16-ից դեկտ. 16-ը)

Ղազվին, 16 դեկտ.

Ղումում կազմված ժամանակաւոր կառավարութիւնը, որի ղեկավարները հանդիսանում են գերմանացիք յանձին իրանց դեսպան պրինց Ռէյսի, սկսեց իր անփառունակ գործունէութիւնը՝ ոտքի հանելով Հարաւային Պարսկաստանում գերմանական ոսկիներով վարձված կամաւորական գնդերը։

Գործունէութիւնը սկսվեց անյապաղ և առանց տատանման։ Համադանում, Շիրազում, Սուլթանաբադում, Քիրմանում, Եազդում, Սպահանում սկսվեց հալածանք անգլօ-ռուսական շահերի դէմ, որտեղերից սկսեցին մէկը միւսի ետևից հեռանալ վերոյիշեալ կառավարութիւնների հիւպատոսները և հպատակները։ Դրանից յետոյ, արդէն յաւակնոտ դարձած պարսիկը մերկացրեց իր ժանգոտած սուրը, իսկ շվէդացի կաշառված մարդիկ ժանդարմների օֆիցէրները փչեցին ռազմի շեփորը և, դաւաճանելով իրանց կոչումին, նետեցին պատերազմի բեմը շտապով հաւաքած խառնիճաղանճ զօրքը Համադանի գծի վրա։ Եւ ահա ամեն կողմից գերմանացի վարձողները՝ որպէս ոչխարների՝ քշեցին Համադան իրանց վարձկան «գերմանացի զինուորներին»։

Ռուսական առաջապահ գնդերը առաջին անգամ պատահելով դրանց Նավանդի մօտ՝ հրաման չունենալով կրակելու՝ ետ են կանգնում։ Այս պարագան արդէն առիթ է ծառայում Ղումի ժամանակաւոր կառավարութեան համար՝ հեռագրելու ամեն կողմ, որ գլխովին ջարդել են ռուսական կօզակներին։ Բայց շատ չանցած՝ հէնց նոյն կօզակները Աւաջի կիրճում սկսում են կռիւը։ Մի քանի հազար հոգուց բաղկացած «գերմանական զօրքերը», թողնելով իրանց անմերձենալի կիրճային դիրքերը, մազապուրծ փախչում են դէպի Համադան, թողնելով իրանց դիակներին կռուի դաշտում։ Երկրորդ յուսահատ կռիւը «գերմանական զօրքերը» անում են Սուլթան-Բուլաղում, որտեղ ռուսական փոքրաթիւ բանակը մի այնպիսի կոտորած է պատճառում նրանց, որ թողնում փախչում են իրանց գերմանացի օֆիցէրներին. իսկ վերջիններս իրանց հաւատարիմ ոյժերով չը կարողանալով նոյն իսկ Համադան մի քանի ժամ մնալ՝ փախչում են դէպի Շիքաստաքօլ կոչված ամրութիւնը, որը հեռու է քաղաքից 21 վերստ և միջին հանգոյցն է Համադան-Քիրմանշահեան և Համադան-Սուլթանաբադեան ճանապարհների։ Այնտեղ ամրանալով, ամեն կողմից ստանում են նոր ոյժեր, բայց, աւա՜ղ, դրանք ևս չեն օգնում ամենակարող գերմանացիներին։ Ռուսական բանակը ջարդելով քշում է նրանց դէպի Մալայէր լեռնային ամուր դիրքեր ունեցող քաղաքը։ Պարսիկները ծիծաղելի վախճանի են հասնում և այնտեղ։ Նրանք դեռ քաղաք չը հասած՝ ռուսական մի գունդ 4 թնդանօթով հասնում է նրանց ետևից և թոյլ չէ տալիս այնտեղ էլ մի հանգիս շունչ քաշելու։ Պարսիկներն այնտեղից է փախչում են Սուլթանաբադ՝ առանց յոյ ունենալու փրկվելու, որովհետև ռուսակ զօրքերը առաջները առած՝ քշում են նրանց և նրանք նոսրանում են, չը նայած որ պար կական այդ զօրքը սկզբում կազմված է Համադանի մէջ 10,000 հոգուց։

Ռուսաց մի այլ զօրամաս Ղազվինից ճա նապարհվելով դէպի Ղում, որպէսզի պա ժի և այնտեղ ծառած ապաղակ «գերման ցի զօրքերին», ճանապարհին պատահում նրանց բանակին Սավա քաղաքի առ գտնվող լեռնաշղթայի վրա։ «Գերմանակ զօրքերին» միացել էին քաշղցի յայտ Նայիբ Հիւսէյնը 1000 ձիաւորով, զանգ Մամադ-Հասան-խանը, Թաւրիզի յեղափ խական հերոս Բաղըր-խանը 600 Թաւր ֆէդայիներով, բախտիարցի և քիրմանշա զինւորներ և այլն և այլն, թւով մի հազար հոգի, զինված գերմանական հր ցաններով և բոլորն էլ ձիաւոր։ Այստեղ հա ւաքված «գերմանական զօրքերը» փորձ են մօտիկ գտնվող Ղարադանի հայ գիւղ րից օգտվել, սպառնալով նրանց կամ զի ւորներ տալ իրանց հայ կորիճներից և կա պատրաստ լինել մեռնելու. Ղարադանի հ յերը անմիջապէս սուրհանդակ են հասցնում Ղազվին զօրապետ Բ.-ից օգնութիւն խնդրելու, որն անմիջապէս հրաման է լիս Սավի առաջ բանակած բանակին՝ առա ջանալու և օգնելու հայերին. մինչև ա հրամանը՝ 40 հոգու չափ հայ զինւորներ զբամ առնելով միանում են իրանց ընկ նուր բանակին, իսկ Թէհրանի թերթերը յայտարարում են, որպէս թէ հայերից մասնակցում են ռուսների դէմ մղվող կռ ներին։ Դեկտ. 7-ին ռուսական զօրամ շարժվելով մի այնպիսի ջարդ է տալիս Ս վայի «գերմանական զօրքերին», որ սրան թողնելով մի քանի հարիւր դիակներ վերածվելով մասերի՝ մի մասը փախչում Ղում, մի այլ մասը՝ դէպի Քաշան, մի մա էլ հրացանները դէն գցելով ապաստանում է շրջակայ գիւղերում։

Այս երկու խոշոր յաղթութիւնից յետ պատառ դարձած, Ղումի ժամանակաւոր կ ռավարութիւնը փորձում է մի յուսահ գործունէութիւն, նպատակ դնելով մայրա քաղաքը գրաւել, որպէսզի հնարաւոր լի երկիրն ամբողջովին ոտքի հանել։ Այս նպա տակը իրագործելն իր վրա է առնում Բ բիզցի Ամիր-Հէշմաթը իր 1000 հոգին բանակով։ Բայց սա էլ նպատակին չհա հասած՝ սրախողխող եղաւ մայրաքաղաք 6 աղաջ հեռաւորութեան վրա։

Վճռված է եղել, որ դեկտ. 9-ի գիշ Ամիր-Հէշմաթը մտնի Թէհրան, նախօր տեսնված լինելով ժանդարմների, ոստիկա ների և տեղական իրանց համակիր րի հետ և բոլորը միասին անմի պէս յարձակվեն ռուսաց և անգլիացոց դ պանատների վրա, ձերբակալեն դեսպան րին և նրանց հպատակներին, սպանեն ա ղական աչքի ընկնող հայերին, սպանեն Ս փէհդարին, Ֆարման-Ֆարմային և ձեռք նեն կառավարութիւնը և շահին պահե րանց անմիջական սպառնալիքի տակ, Բ պէս և հրամայեն շահին, որ պատեր յայտարարի Ռուսաստանին և Անգլիային

Այս դաւադրութիւնը սակայն իմանում են ռուս ները և Սիփեհդարը։ Վերջինս նոյն գիշ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԵՕԹԸ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐԸ» *)

Գ. մաս

II

Վերջապէս կարաւանն հասաւ վերջին կայարանը՝ քառասներորդ իջևանը, որտեղից հետևեալ օրը մինչև արևի ծագումը պիտի գնար ու հասնէր Քէրբէլա։ Ամռան օրեր էր. կարաւանն իջած էր մի օազիսում, որտեղից երևում էին տափարակ դաշտի հեռաւոր հօրիզօնում, ճիշդ արևելեան կողմը լոյսի հետքեր։ Շատերը նոյնիսկ լսում էին քամու բերած ձայներ, որոնք գալիս էին «նուիրական արիւնի թաթխված աղէտալի վայրից» (Քէրբէլայից)։ Ուխտաւորների [illegible] սրտերը տրոփում էին անհանգստութիւնից. ամենքը տենչում, փափագում էին ժամ առաջ գնալ համբուրել այն «աղէտների ենթարկվածը» (Մազլումի) գերեզմանը, որը իրանց փրկելու համար կեանքը ոչ միայն վտանգի, այլ նոյնիսկ մահվան մատնեց, ընկաւ Շիմրինի սրից, որին ուղարկել էր բռնաւոր Եզիդը։

Սև-քարին ուխտագնացների հոգին, որ մաշված էր այն տխուր խորհրդով՝ թէ ինչպէս կարելի է գնալ ու երկրպագել անզգայ ապառաժը, այժմ բոլորովին փոխված էր բուռն ոգևորութեան, քանի որ գնում էին կենդանի ոգու, անմահ հոգու՝ շիրիմին ու աճիւնին այցելելու, որը անմահ Մէհդիի մարմինը հագած՝ թափառում էր աշխարհի շուրջը, արևելքից արևմուտք, հիւսիսի բևեռից մինչև հարաւ, Ջամբուլգայից Ջաբուլսա, և անմիջապէս օգնութեան էր հասնում իր երկրպագուներին ամեն նեղ պարագային։

Ահա այս երևակայութեամբ ամբողջ օրվայ տօթն ու տապը կրելուց յետոյ, մինչև կէս գիշեր էլ հանգստացան, և ապա կարաւանը ճանապարհ ընկաւ ճիշդ դէպի արևելք, արևի ծագման նշանակէտը, այն արևի, որ հարիւրաւոր դարեր կեանք ու ոգևորութիւն էր ներշնչել Արիների աշխարհին։ Գնում էր ջորիների կարաւանը զանգակների բազմաձայն զօղանջիւնների տակ, գնում էր միալար, դրաստների անվերջ ճռճռումներով, և հազարաւոր մարդիկ աչքերը դէպի արևելք չռած՝ զննում էին հօրիզօնը, թէ երբ պիտի ծագէ կենսաբաշխ արևը, երբ պիտի երևի Քէրբէլայի դամբարանի ոսկեպատ գմբէթը։ Դաշտը տափարակ, ճանապարհը երկար էր, իսկ լոյսի այգին սպասողների հոգին ճռնշված. ժամերը տարիների նման երկար էին թւում։ Միայն բիւրաւոր աստղերի լոյսը, աստղների ցոլքն էր լուսաւորում ուխտաւորներին։

Թէև դանդաղ, բայց անտարակոյս արշալոյսը փառաւորապէս յաղթանակեց։ Խաւարի մռայլը տեղի տուեց քաջակորով լոյսին։ Հօրիզօնի ամբողջ արևելեան մասը մութ մանուշակի գոյնով բոցավառվեց. ոգևորութիւնը այն աստիճան բարձրացաւ, որ ուրախութեան ճիչերին յաջորդեցին ցնծութեան երգերը, աղօթքներն ու մեղեդիները։ Մէրսիախանների տաղերի ելևէջներն օդն էին կլկլացնում և սիրտ գրաւում։ Ամեն մի մէրսիախան այնպիսի ոգևորութեամբ էր երգում, այնպիսի բարձր ձայնով, որ կարծես թէ ուզում էր ընկերակիցների ձայները նսեմացնել և իրան քաշել ունկնդիրների սիրտը։ Կենսատու լոյսը և ոգևորիչ երգերը այնպիսի հրճուանք պատճառեցին ուխտաւորներին, որ բոլորն էլ ոգևորված՝ աչքերը ուղղած սպասում էին ինչպէս արևի, նոյնպէս Քէրբէլայի դամբարանի գլխին կանգնած ոսկեգմբէթի երևալուն։

Լոյսն աստիճանաբար սաստկանում էր։ Վարդամատի մանիշակագոյն բեհեզի շերտը ալեվառվեցին, կարմիր, կանաչ, դեղին գոյներ առաջացան, մայլի մութ քօղը բարձրացաւ Քէրբէլայի վրայից ու արևագալի շողքերի տակ ցոլաց Քէլբէլայի դամբարանի ոսկեձոյլ գմբէթը արևիկի նման։ Ամեն կողմից ախունդներն ու մէրսիախանները գոչեցին. «Սալաւաթ, ա՜յ սալաւաթ» (Դաւանութեան խոստումն)։

Կարաւանը կանգ առաւ, ուխտաւորներն իջան ձիերից, չոքեցին աւազի վրա, խնդրուածքը կատարելու, որպէսզի իրանց մուրազներին հասնեն։ Ամենից առաջ իշխանուհին իջաւ իր թախթի-րաւանից, չոքեց աւազի վրա, երկրպագեց, երեսը քսեց գետնին, աւազին։ Ապա մի պտղունց աւազ վերցրեց այն հողից, որը ներկված էր Իմամ Հիւսէյնի արիւնով, գցեց բերանը, կուլ տուեց, ճիշդ այն ձևերով, ինչպէս կատարում էին հաւատացեալները։ Ապա ջուր ուզեց, լուացվեց շիաների ծիսական ձևերով, կանգնեց աղօթքի։ Եօթն անգամ չոքեց, երկրպագեց գետինը և բազմեց թախթի-րաւանը, ճանապարհը շարունակելու։

Շարժվելուց տասն րօպէ յետոյ՝ ուխտաւորների ուրախութեան աղաղակների տակ նորից կանգնեց կարաւանը։ Ամենքի աչքերը սևեռած էին Քէրբէլայի դամբարանի ոսկեձոյլ գմբէթին, որի ետևից դուրս էր գալիս արևի սկաւառակը։ Նորից սալաւաթ, նորից երգ ու տաղ, նորից երկրպագութիւններ և աղօթքներ։ Արևը թէև դանդաղ, տասը րօպէի ընթացքում բարձրացաւ հօրիզօնից և ոսկեձոյլ գմբէթից ու իր բիւրաւոր ճառագայթներով լուսաւորեց ու շողշողացրեց ամբողջ Քէրբէլան ու դաշտը։ Եւ այս ոգևորութեան մէջն անգամ կարաւանի ճանապարհորդ հաջիների աչքերն ու ականջները ուղղված էին այն հրաշքի իշխանուհու կողմը, թէ նա ի՜նչ ոգևորութեան մէջն է։

Քէրբէլայից դեռ մի մղոն հեռու՝ սուլթանի լիազօրը, բանկերի պատգամաւորը, շահի հիւպատոսն ընդառաջ էին եկել իշխանուհուն, որի համար կանխապէս պատրաստութիւն էին տեսել, բնակարան վարձել ու կահաւորել էին։ Իշխանուհին թախթի-րաւանի դռնից լսեց ընդառաջողների բարեմաղթութիւնները, դէմքը ծածկած, իր գոհունակութիւնը յայտնեց, և ճանապարհները շարունակեցին։ Կարաւանից բաժանվեցին բեռնակիրները, մթերատուները, վրանակիրները և պահապանները, իսկ ուխտաւորների մեծ մասը ոտքով, տիկիններն ու օրիորդներն առանց ջորիներից իջնելու մտան Քէրբէլայի «մեծ փողոցը», շարունակեցին իրանց ուղին մինչև Իմամ Հիւսէյնի դամբարանը։

Այդտեղ ամեն մարդ, այր թէ կին, իջաւ քէջէֆաներից և թախթի-րաւաններից, մտաւ դամբարանի ընդարձակ դաւիթը, որը տասնեակ հազար ուխտաւոր կարող է ամփոփել։ Այդտեղից շատերը մօտեցան և մտան դամբարանի ներքին մասը, շատերը բաւականացան միայն արտաքին որմերը համբուրել ու գնալ իրանց համար բնակարան գտնելու։

Անծանօթ սուլթանէն դամբարանի ներքին մասի մէջ չոքէ-չոք իր աղօթքը կատարեց, մեծ արմանք ու զարմանք պատճառելով Քէրբէլայի հազարաւոր թալաբաներին (ուսանող աստուածաբանական դասընթացքի)։ Ապա դուրս հանեց պայուսակից մի ոսկեձոյլ լըրանոց աջ, գոհարապատ հագցրած կանաչ դրօշակի ձողի գլխին, յանձնեց դամբարանի աւագ պահապանին, որ իր յիշատակը ևս դրվի նուիրական գերեզմանի շուրջը։ Կանաչ դրօշակի վրա ոսկեզօծ ասեղնագործած էին Ղուրանից այն այաթները, որոնք վերաբերում էին մարգարէին, Ալիի և սրա սերնդի անդամներին։

Այս նուէրը այնպէս գրաւեց Քէրբէլայի կղերին, որ սուլթանէն դարձաւ նրանց խօսակցութեան առարկան։ Ամենքը նրա դարձը, նրա՝ շիիզմին յարելը մեծ հրաշք էին համարում և ամենքն էլ հրճվում էին այս նոր յայտնութեամբ։

Բայց այն րօպէին, երբ տիկինը դուրս եկաւ դամբարանից և ուղղվեց դաւիթի դարվազի կողմը, որ գնայ բնակարան հանգըստանալու, նրա աչքերը նկատեցին Ուչարիին, որը եկել էր դամբարան, զննելու թէ արդեօք Շամից վերադարձել է իր բարեկամը՝ բաշտեցի Րուստամ խանը ևս։ Երբ ամբողջ մի ժամ որոնումներից յետոյ՝ չը գտաւ իր տաղանդը յարգող ազնուականին և յուսահատ պիտի վերադառնար այն քարվանսարայի խցիկը, որը իրան երկու ամիս պատսպարել էր Բաղէստանի սոսկալի շոգերից, յանկարծակիի եկաւ, երբ նկատեց այն իշխանուհուն, որն իրան հալածել էր եօթն ամսից ի վեր։

Ուչարին անմիջապէս ետ դարձաւ, խա վեց ամբոխին, որ իրան չը նկատեն Թանէի հետևորդները։ Իշխանուհին ան ջապէս կանչեց տնտեսին իր մօտ և հր մայեց մի պարկ արծաթադրամ ցրել աղքատներին, որպէսզի իրան հետամտող ներին շշմեցնէ, միւս կողմից իր լրտես պետին ցոյց տուեց Ուչարիի գնացած կ մը և հրամայեց կամացուկ հետևել և գտ նել երգիծաբանի բնակարանը։

Երբ պարկերը բացեցին և դրամն ա ձախ ցրեցին, ամբոխը ճանապարհ բացեց իշխանուհին ազատ կարողացաւ անցնել գ ւիթը, բակը, հասնել դարվազա։ Այդ ի նուածքին այնպէս էր ալիքի նման ետ առաջ մղվում ժողովուրդը, որ լրտեսապետ հակառակ իրան տրված խիստ հրաման չը կարողացաւ գտնել երգիծաբան Ուչա րիին, որը երկու ամսից ի վեր թափառ էր Քէրբալայում և անհամբեր սպառում հովանաւորին։

Որքան որ հրճուանք պատճառեց Մայ քէր սուլթանէին Ուչարիի հանդիպ այնքան վրդովեց նրան երգիծաբանի յայտնվելը, իր լրտեսների ապիկարութ և բաղդի անաջող խաղը։ Սուլթանէն պիսի անաջողութիւններից յուսահատ չէր. նա յամառ կերպով առաջ էր գն որ նպատակին հասնի և բոլոր խո խոչընդոտները փշրէ ու անցնի։ Այն գի Մայփէքէր-խանումի լրտեսները տարած ցին ամբողջ քաղաքում, որ գտնեն երգ բանին. կաշառքը, ոսկին ու արծաթը առաջ բաց արեց ամեն տեսակ փակ դ րը։ «Հրաշքի» առարկայ սուլթանէի պագուները ամեն ջանք գործ դրին, որ բաղարձ տիկնոջը ծառայեն, բայց ջանքերը ապարդիւն մնացին։ Ոչ ոք կարող կարծել, թէ Քէրբալայի ծուռ ու մուռ փողոցներից որևէ մէկի անկիւնում հովանաւորված է երգիծա փիլիսոփան։

Սար

---

*) Տես «Մշակ» № 283.

որպէս պատերազմական մինիստր, բոլոր բախտիարներին և սարբազներին գնում է քաղաքի պարիսպներում և դիրքերում, որպէսզի Ամիր-Հէշմաթը եթէ փորձի մտնել քաղաք՝ դիմադրեն և չը թողնեն։ Իսկ միւս կողմից Ենգիմամի ռուսական զօրքերը շարժվում են դէպի Թէհրան, երբ և դէպի Ղում տանող ճանապարհի վրա Ռաբաթքարիմ գիւղին հասնելով հանդիպում են Ամիր-Հէշմաթին։ Նախ քան այս կռիւը սկսվելը՝ արդէն Սավայի ռուսական զօրքերը հասած լինելով Ղում, ժամանակաւոր կառավարութիւնը տեսնում է իր անյոյս դրութիւնը և փախչում դէպի Քաշան, թողնելով պատերազմական հարուստ աւար։ Այս լուրը հասնելով Ամիր-Հէշմաթին, վերջինս բոլորովին յուսակտուր փորձում է մի կերպ պրծնել և մտնել Թէհրան, որպէսզի չորս կողմից չը շրջապատվի Ղումի և Ենգիմամի ռուս զօրքերով. Կռիւը սկսվում է Ենգիմամի ռուս զօրքերի և «գերմանական զօրքերի» միջև։ Ջարդը կատարեալ է լինում։ Ամիր-Հէշմաթը կարողանում է փախչել, պատերազմի բեմում թողնելով մօտ 300 հոգի վիրաւոր և սպանված, որոնցից 118 հոգին միայն սրով սպանվածներ են։ 71 հոգի էլ գերի են ընկնում ռուսաց զօրքերին։ 200 հոգու էլ ծըրպտեալ կերպով աջողվում է փախչել Թէհրան և թաքնվել, իսկ ինքը Ամիր-Հէշմաթը փախչում է անյայտ ուղղութեամբ։ 71 գերիները բերվում են Ղազվին։

«Գերմանական զօրքերի» գործունէութիւնը այս մէկ ամսի մէջ առայժմ այսպիսի ձախորդութեան հանդիպեց և նրանց միջոցով շպանակներ որսալ ցանկացող պարսիկները փոխեցին իրանց աստառը։

Ս. Ցովեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԱՐՈՒԱԾԷՔ ԲՈՒՆԸ

«Մշակի» № 269-ում լոյս տեսած յօդուածում գրել էի, որ վանեցի վաճառականները համախոսականով պատգամաւորների միջոցով դիմում են արել Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Պետական Դումայի անդամ Մ. Պապաջանեանի միջնորդութեան, խնդրելով որ վնասների հատուցման կամ փոխառութեան ձևով օժանդակութիւն լինի իրանց՝ ըստ կարելոյն կարգի դնելու իրանց խանգարված տնտեսական դրութիւնը և ձեռնարկելու գործի։

Իմանում ենք, որ վաճառականների այս դիմումը նկատի առնված լինելով՝ որոշվել է իւրաքանչիւրին 1200—2400 ր. փոխառութիւն անել, հինգ տարվայ շրջանում վերադարձնելու պայմանով, որպիսի որոշումը պատգամաւորութեան միջոցով հաղորդվել է վաճառականներին։

Այս որոշումը երևի վատ ազդեցութիւն է թողել մի քանի մարդկանց վրա, կամ նրանց դուր չէ եկել, ուստի նրանցից մէկը փութացել է մի յօդուած զետեղել Թիֆլիսի յայտնի թերթում և արտայայտվել այդ որոշումի դէմ, խեղաթիւրելով միևնոյն ժամանակ իրողութիւնը, նպաստի գումարը բարձրացնելով 25,000-ի, և դա որոշ նպատակով, որպէս զի զայրոյթ ու բողոք առաջացնէ ժողովրդի ուրիշ դասակարգերում, և արդէն այդպիսի նպատակով էլ առաջ է մղում մանր առևտրականներին և արհեստաւորներին և առաջին անգամ նրանց օգնելու անհրաժեշտութիւնը ցուցնում՝ «որն է կարևոր և անյետաձգելին» հարցով։ Այս առիթով յօդուածագիրը չի մոռացել նորից քարը շպրտելու վաճառականների և առհասարակ հայ հարուստների հասցէին, որպէս անտարբերներ հասարակօգուտ պէտքերին և խորթ՝ համազգային տառապանքներին։

Ոչ ոք չէ ուրանում, որ ինչպէս ժողովրդի այլ դասակարգերում, նոյնպէս էլ վաճառականների շրջանում կարող են գտնվել և գտնվում են ազգային տառապանքներին անտարբեր և խորթացած տիպեր, ուստի ինչ պատճառով մեղադրանք բարդել միայն վերջինների վրա. ինչո՞ւ են ուրանում, որ Վանի վաճառականները միշտ էլ առատաձեռնութեամբ տուել են ազգային այն ամեն պէտքերի համար, որոնց օգտակարութեան մասին համոզմունք են գոյացրել, տուել են անգամ կասկածելի պէտքերի համար, առանց նոյնիսկ իրաւունք համարելու հետաքրքրվելու նրա գործածութեան եղանակի մասին, իսկ հաշւի պահանջումը արդէն համանիշ էր համարվում դաւաճանութեան. և եթէ գտնվել են կամ դեռ գտնվում են մարդիկ կամ վաճառականներ, որոնք զլանում են իրանց նպաստը անյայտ պէտքերի համար, կամ իրանց համոզմունքներին ու հայեացքներին հակառակ են համարել յայտարարված նպատակը, ինչո՞վ են նրանք մեղադրելի։ Այնու ամենայնիւ՝ զանազան անյայտ և մութ նպատակներից զատ ո՞վ տուեց մեծագումար նպաստներ . . . . . . մամուլի, աշխատանքի տան շինութեան և ուրիշ նպատակներով եղած բազմաթիւ հանգանակութիւններին՝ վերջին 20 տարվայ ընթացքում ո՞վ վերաշինեց այրված վանքերն ու եկեղեցիները, ո՞վ վերականգնեց Երամեան, Կենտրոնական, Վարժապետանոցի, Վարագի և ուրիշ ազգային հսկայ շէնքերը. մի՞թէ վաճառականները չեն կանգնել միշտ այդ հանգանակութիւնների գլուխը. իսկ իրանց քննադատներն ի՞նչ են տուել։

Իսկ անցեալ աշնան, երբ զինուորացու երիտասարդների դասալքումների և զինուորական կոչին չը պատասխանելուն առթիւ մթնոլորտը փոթորկվել և աղէտը նախագուշակվում էր, ո՞վ էր որ նորից մեծ գումարներ տուեց ինքնապաշտպանութեան նպատակով սկսված հանգանակութեան, չը նայած որ վաճառականները զինուորական փրկանքի և զինուորական պիտոյքների մատակարարութեան համար մեծ գումարներ տուել ու քաղաքական մթնոլորտի փոթորկվելու պատճառը իրանք չէին երբեք. սակայն անյայտ մնաց թէ ինքնապաշտպանութեան անունով հաւաքված այդ գումարներն ո՞ւր գնացին, քանի որ հիասթափւելով ու ապշութեամբ տեսնվեց, որ տասնեակ տարիների «հայ քաղաքական մեծ կազմակերպութիւնն» ապրիլի կռիւների ժամանակ քաղաքում հազիւ թէ 200 հրացան կարողացաւ մէջտեղ հանել, նոյնիսկ ապրիլեան դէպքերի ժամանակ մարտիկների սննդեան ծախքերի համար ո՞վ վճարեց մեծագումար դրամներ և ո՞վ պահպանեց Վանում տասնեակ հազարաւոր գաղթականներին և քաղաքացի օրն օրին ապրող կարօտեալներին։

. . . .

Իսկ այսօր հայ վաճառականի ներկայ դրութիւնն հետևեալ պատկերն է ներկայացնում. տասնեակ տարիների աշխատութեան արդիւնքը փճացած, տներն ու օջախները հրդեհված ու քանդված. իսկ իրանք 100 հազարաւոր դրամագլխի փոխարէն ծանրաբեռնված 100 հազարների պարտքերի ներքև, նոյնիսկ իրանցից շատերն էլ մատնված կարօտութեան կամ արդէն թշուառութեան վիհի եզերքին կանգնած, անգործ ու թափառական. այնու ամենայնիւ արժանապատուութեան զգացումը թոյլ չի տալիս նրանցից շատերին մօտենալու նպաստաբաշխ սեղաններին, ինչպէս անում են շատերը, որոնք թէև վաճառական չեն, բայց նիւթական աւելի նպաստաւոր հանգամանքներում են գտնվում։

Այս գրուածքով վաճառականներին ձրի փաստաբանութիւն անել չէ նպատակս, ոչ էլ այն մտքումը յայտնել թէ մանր առևտրականներն ու արհեստաւորները կարօտ չեն օգնութեան, այլ այն, թէ երկրի տնտեսական առաջադիմութեան ու կենդանութեան կարևոր ազդակներից մինը վաճառականութիւնն է, նա է որ վարկ է բանում մանր առևտրականներին ու արհեստաւորներին ու կենդանութիւն ներմուծում տնտեսական աշխարհում։ Նրանք են միևնոյն ժամանակ քանդված հայրենիքի ապագայ սիւներն, նրանք եթէ չը վերադառնան երկիր, ուրիշները բնավ չեն անի վերադառնալու, վերադառնան իսկ, զուրկ կը մնան արտաքին աշխարհի հետ յարաբերութիւնից. իսկ վաճառականներն աւելի շատ շանսեր ունեն վերադառնալու, եթէ հայրենիքում ապրելու հնարաւորութիւնից զուրկ չը լինեն, որովհետև ամենից աւելի նրանք են, որ հայրենիքի հետ կապված են տնտեսական բազմաթիւ կապերով, հողով, ջրով, կալուածներով և առևտրական ուրիշ բազմաթիւ պատճառներով։

Պարոննե՛ր, եթէ հայրենիքի ապագայ վերաշինութեան հարցը անկեղծապէս հետաքրքրում է ձեզ, մի հարուածէ՛ք ծառի բունը, որի ճիւղերումն էք դուք պատսպարվում. եթէ տապալվի ծառը, կը տապալվէք և դուք։

Վանեցի

ԿՕՕՊԵՐԱՏԻՎԱՅԻՆ ՃԱՇԱՐԱՆ

Կիրակի, դեկտ. 20-ին, Կովկասեան Կանանց Ընկերութեան նախաձեռնութեամբ կայացաւ մի բազմամարդ ժողով, քննելու Ընկեր. առաջարկը՝ հիմնել Թիֆլիսում կօօպերատիվ սկզբունքներով ճաշարաններ։ Վարչութեան զեկուցումը յայտնում էր, որ կենսական մթերքների թանգութեան պատճառով՝ թանգութեան դէմ մաքառելու գլխաւոր միջոցը՝ կօօպերատիվ ճաշարանների հիմնելն է։

Ժողովը, համակրութեամբ վերաբերվելով առաջարկին, մի քանի կէտերի մասին թեր և դէմ վիճաբանելուց յետոյ, ընտրեց մի մասնաժողով՝ մշակելու կանոնադրութեան ծրագիրը։

Մասնաժողովը ընտրվեց 12 հոգուց բաղկացած։

ԵՂԲ. ԱԼՇՎԱՆԴԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

Այլ ևս ո՞վ կը համարձակվի մեր գաղթական քոյրերին ծոյլ և անընդունակ համարել...

Դվորցօվայա փողոցից անցնողի հայեացքը ակամայ կանգ է առնում եղբ. Ալշվանդի խանութի ցուցանակներից մէկի վրա, որի գլխին գրված է «Գործ հայ փախստականների» խորագիրը։

Մինչև երեկոյ խռնված բազմութիւն կայ նրա առաջ. մի խմբին յաջորդում է միւսը. մօտենում են ու շլանում զարմանքից, մերթ հիանում, մերթ տարակուսում, ապա ներս մտնում, գնում ձեռագործներից շատերը և ոչ ոք չէ ժխտում նրանց բարձր արժէքը, ապա հիացած համոզմունքով հեռանում են։

Եւ այսպէս շարունակ...

Ցուցահանդէսը զարդարված է բազմապիսի ձեռարուեստի ամենանուրբ տեսակներով։ Սփռոց, որ մօտ 4 արշին լայնութեամբ բռնում է պատի կէսից աւելին և իր ընքշութեամբ տարակուսանքի մէջ դնում նրբիմաց դիտողին։ Մի կողմն ապակեզարդ դարակում բռնում են մանր կտորների ծալքերը, թաշկինակ, անձեռոցիկ, ժանեակներ... Մի տեղ սեղանի վրա գուլպայ, ձեռնոց և այլն, միւս տեղ բարձի ասեղնագործ երեսներ, մետաքսէ գործուածքներ, փոքրիկ ճաշակաւոր գորգ. իսկ ամենահարուստ մասը մտնում էր ցուցանակում, որ իր ամենաընտիր կերտուածքներով էլ աւելի շուք է ստանում պճնվելով կարմիր ժապաւէններով ու գեղարուեստական ձևաւորումով։

Ասեղնագործ կտորներ կան, որ վեր են բոլոր գովասանքներից և ոչ մի արտասահմանեան նրբութիւն չէ կարող գերազանցել նրանց, իսկ երբեմն այնքան ինքնուրոյն աշխատանքները, որպիսիք միայն արևելեան ազգերի ճաշակին են յատուկ, կարող են համարձակ նորութիւն լինել բոլոր եւրօպական ազգերին։

Ձեռագործների մեծ մասն արդէն վաճառված է, բայց դեռ մնում են այնտեղ՝ որպէս ամենանուրբ ձեռարուեստի ու ճաշակի հրահանգիչ։ Շատերը նորերն են պատուիրում, և կան անհատներ, որոնք գնելով իրը՝ նորից նուիրում են կրկնավաճառքի համար գաղթականների օգտին։

Գործի գլուխ է անցել մեր կանանց և օրիորդներից կազմված մի գեղեցիկ խմբակ, որ ամենուրեք ցոյց է տալիս ջերմ ու բարեացակամ վերաբերմունք դէպի մեր փախստական քոյրերի զբաղմունքը և ոչ մի ջանք չէ խնայում գործն ընդլայնելու աւելի մեծ շրջաններում։

Լսում ենք, որ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը մտադիր է բանալու յիշեալ գործի համար արհեստանոց։

Փառք ու պատիւ նման գեղեցիկ ու խրախուսելի ձեռնարկութեան առիթով։

Ու թող այլևս ոչ ոք չը մեղադրէ մեր փախստական քոյրերին անընդունակութեան ու ծուլութեան մէջ...

Հ. Պետ.

ԲՈԶԱՐՋԵԱՆՑԸ ԵՒ ՄԱՆՐ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ

Շատ ժամանակ չէ, ինչ Բոզարջեանի և մանր վաճառականների միջև թիւրիմացութիւն է պատահել այն պատճառով, որ գործարանատէրերը աշխատում են խլել մանր վաճառականներից այն կօպէկները, որոնք որպէս աշխատանք մնում են հէնց այդ մանր վաճառականներին։

Պատերազմից առաջ գործարանատէրերը մանր վաճառականներին 4 րուբլուց 1 ր. էին զիջում. Իսկ հիմի բոլորովին ուրիշ պատկեր է ներկայացնում. 4 րուբլու ծխախոտի գնից միայն 50 կ. են զիջում. իսկ 5 րուբլուց՝ 90 կ.։

Այս գներին մանր վաճառականները կը համաձայնէին, եթէ Բոզարջեանը չը պակասեցնէր այս չնչին զեղչերը. նա այժմ 4 րուբլուց միայն զիջում է 18 կ., իսկ 5 րուբլուց՝ 25 կ.։

Բոզարջեանի այս տեսակ վարմունքը վատ ներգործեց մանր վաճառականների վրա, որոնք վճռեցին չը ծախել նրա ծխախոտները։

Այս պատճառով էլ Թիֆլիսում դժուարութեամբ են ճարվում յիշեալ գործարանի ծխախոտները։ («Սախալխո Գազէթի»)

ՊՐՕՖ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Սարատով, 14 դեկտեմբերի

Նեղ ընտանեկան շրջանում համեստ կերպով տօնվեց Սողոմոն Եղիազարեանի պրօֆեսորութեան 30-ամեակը։ Յոբելեարի բնակարանը այցելեցին Կիևի համալսարանի և առևտրական ինստիտուտի (այդ երկու հաստատութիւնները՝ պատերազմի պատճառով՝ Կիևից փոխադրված են Սարատով) ուսանողները, պրօֆեսորները, տեղիս համալսարանի հայ ուսանողների և հայկական գաղութի ներկայացուցիչներն ու մասնաւոր մարդիկ։ Կային մի շարք շնորհաւորական հեռագիրներ և նամակներ։ Սարատովում ապրող հայերը նուիրեցին պատկառելի պրօֆեսորին մի շքեղ պսակ զգացված ուղերձով։ Ներկայ եղողներից մէկը իր ճառի մէջ, ի միջի այլոց, յայտնեց պ. Եղիազարեանին հայ ուսանողութեան խոր փափագը, որ նա վերադառնայ Կովկաս՝ հայրենիքի ցաւերին ծառայելու։

Գ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Լուրեր էջմիածնից

Էջմիածին, 20 դեկտեմբերի

Այստեղ համաճարակի բնաւորութիւն է ստացել բծաւոր տիֆը։ Հիւանդանոցում 50 հիւանդից աւելի է. գիւղում ևս մասնաւոր տներում կան հիւանդներ բծաւոր տիֆով. դրութիւնն այդ տեսակէտից բաւական լուրջ է։

Ճեմարանի ննջարանը ախտահանութեան է ենթարկվում, սակայն ճեմարանը դեռ ազատ չէ հիւանդներից։ Այսօր գումարվում է բժշկական խորհուրդ, որը կորոշի որքան յարմար է այժմ բժշկական տեսակէտից ճեմարանում դասեր սկսել. զատ-զատ բժիշկների կարծիքը այդ մասին բացասական է. հաւանական է, որ խորհուրդն էլ դրական որոշում չը տայ։ Ճեմարանի վարժոցում այժմ ապրում են որբերը, որոնց մէջ ևս տարածված են հիւանդութիւններ։

Ս. Ց.

ՇԱՔԱՐԻ ՀԱՐՑԸ ԲԱԳՒՈՒՄ

Բագու, 17 դեկտ.

Կենսական մթերքների թանգութիւնը և նրանց չգոյութիւնը սուր կերպարանք են ստանում։ Հասարակական կամ դումայի ժողովները, դիմումները առ այժմ ոչ մի հետևանք չը բերին, այլ ապրում ենք սպասողական դրութեան մէջ։

Բագուն շաքարի, շաքարաւազի արտահանութեան և մեծաքանակ վաճառքների առաջնակարգ կենտրոններից մէկն է կազմում, որտեղից՝ բացի Կովկասի զանազան շրջանները և Անդրկասպեան երկիրն ուղարկված շաքարի քանակից՝ տասնեակ միլիօն պուդերով արտահանվում է Պարսկաստան տրանզիտ շաքար և շաքարաւազ։ Չը նայած որ շաքարի գործարանի տեղիս պահեստները սկզբից մինչև այժմ որոշեալ նորմայով ու քանակութեամբ ազատ ստանում են շաքար, սակայն տեղիս շուկաներում շաքարի սով է տիրում. դա մասամբ վերագրվում է շաքարի ֆիրմաների և այդ գործով առևտուր անողների որոշ սիստեմով դրված աններելի շահագիտութեանը։

Քաղ. դուման և վարչական մարմինները ստիպողական միջոցներ ձեռնարկեցին, ֆիրմաներին պահանջ դրին, որ, բացի Պարսկաստան արտահանելուց, միշտ առձեռն պահեստներում պիտի ունենան ընդմիշտ 200,000 պուդ պատրաստի շաքար, տեղական կարիքների համար։ Ինչ խօսք, որ շաքարի գործարանատէրերի տեղիս ճարպիկ գործակալները—որոնք ընդհանրապէս, հարկ է ասել, հրէայ են— այդ մասին մեծ խոստումներ տուին, ռաֆինադ շաքարը մեծ քանակութեամբ ուղարկեցին Պարսկաստան, իսկ Պարսկաստանում ընդունված «Մարսէյլի» կոչված շաքարը պահեստներում թողին, հարկ եղած մարմիններին հաւատացնելու համար որ ունեն առձեռն շաքար. սակայն այդ «Մարսէյլի» կոչված փոքրագլուխ շաքարը Կովկասում գործ չեն ածում։

Շաքար վաճառողները գործարանի ֆիրմայի մարդիկն են, սակայն շաքարը գտնվում է տեղական բանկերի իրաւասութեան ներքոյ։

Որոշեալ պայմանների համաձայն, շաքարը վաճառում են ֆիրմայի գործակալները այն առևտրականներին, որոնք ունեն առևտրի վկայական, ստանում են կանխավճար, վաճառման թոյլտուութեան թուղթը ներկայացնում բանկին, վերջինս էլ, ըստ հերթին—որը ձգձգվում է ամիսներով—արժէքը ըստանալով շաքարը բաց է թողնում։ Այդպիսով՝ ֆիրմաների գործակալները ազատ ապացուցանում էին, որ շաքար այս-ինչ ամսին կամ յետագայ ամիսների համար ծախված և բոլոր պահանջներին բաւականութիւն է տրված, այն ինչ՝ գեշեֆտմախերութիւնը իր գործն էր կատարում, «գնիր՝ ծախեմ, ծախիր՝ գնեմ» և ուրիշ օյինբազութիւններին վերջ չը կար։ Սակագին է նշանակված, բայց շուկայում շաքար չը կայ, մի քանի խանութներում գաղտագողի՝ սակագնից 2 կ. աւել գնով կարելի է ձեռք բերել։ Բագուեցիների երեսը շատ ու քիչ պարզ էին անում նոր կազմակերպված կօօպերատիվ խանութները, որոնք 5 ֆ. ոչ աւել 19—20 կ.-ով վաճառում էին ժողովրդին։

Այդ հարցը անցեալները քաղ. դումայում դրված էր և մեծ աղմուկների առիթ տուեց. ձայնաւոր Հ. Տէր-Միքայէլեանն արաւ պատճառաբանեալ մերկացումներ այդ ֆիրմաների շահագիտութիւնների մասին, որ Բագուում շաքար չի ճարվում, այն ինչ հազարաւոր քսակներով արտահանվում է Պարսկաստան. ալիւրի սով է, վագոն չը կայ, բայց յատուկ գնացքները փոխադրում են Բագու՝ Պարսկաստանի համար շաքար ու շաքարաւազ։

Թեր ու դէմ վիճաբանութիւնները եկան այն եզրակացութեան, որ ձայների առաւելութեամբ վճռեց դիմել ուր հարկն է՝ ընդմիշտ արգելելու շաքարի արտահանութիւնը Պարսկաստան, իսկ շաքար փոխադրող յատուկ գնացքները յատկացնել ալիւրի և աւելի սուր կարիք ունեցող կենսական մթերքների համար։

Լը-ին

ՂԱՐԱԲԱՂԻ ԼՐԱԲԵՐ

Խանքենդ, 12 դեկտեմբերի

Դառն կացութեան մէջ է Ղարաբաղի ժողովուրդը. ամենուրեք տիրում է յուսահատութիւն և լքումն։ Ղարաբաղի որ գիւղն էլ մտնես, կը տեսնես միևնոյն դրութիւնը. բոլորն էլ գանգատվում են տնտեսական ծանր կացութեան մասին. տնտեսական խնդիրը գերակշռութիւն է ստացել ուրիշ կենսական խնդիրների հանդէպ։ Եւ այդ միանգամայն հասկանալի է, եթէ ի նկատի ունենանք այն լուրջ ու ըստ ամենայնի մտահոգիչ խնդիրը, որի անունն է... հացի խնդիր։

Ինչպէս յայտնի է, ներկայ տարվայ բերքը Ղարաբաղում անբաւարար եղաւ. բնութեան արհաւիրքները՝ անձրևը և կարկուտը ձեռնունայն թողին գիւղական ժողովրդին։ Եւ դրա հետևանքն այն եղաւ, որ՝ միշտ յարմար առիթի սպասող՝ սպեկուլեանտները գլուխ բարձրացրին և արհեստական կերպով կենսական մթերքների՝ առաւելապէս ցորենի, ալիւրի և կորեկի գները անհաւելի չափերով բարձրացրին։ Ներկայումս սպեկուլեանտների անարգ գործունէութեան և ճանապարհների հաղորդակցութեան անկանօն լինելուն շնորհիւ է, որ, ընդհանուրի հետ միասին, տուժում է Ղարաբաղի ժողովուրդը։

Ժամանակին կանխատեսելով իրերի ներկայ դրութիւնը, «Մշակի» մէջ մենք առաջարկել էինք սպեկուլեանտների գործունէութեան դէմ կտրուկ միջոցների դիմել։ Այդ գործում, հարկաւ, ամենամեծ պարտականութիւնն ընկնում էր գիւղական ժողովրդի գիտակից տարրերի վրա, որոնց մենք առաջարկում էինք կօօպերատիվ հիմունքների վրա կենսական մթերքների շտեմարաններ բանալ, մի առաջարկութիւն, որ շնորհիւ մեր գիւղացիութեան մտաւոր անհասութեան, առաւելապէս գիւղական կուլակների ընդդիմութեան պատճառով, քիչ արձագանք գտաւ գիւղերում։

Թանգութեան դէմ կռւելու համար մեծ դեր է վերապահված նաև տեղական ադմինիստրացիային։ Սակայն դժբաղդաբար վերջինս արմատական միջոցների չէ դիմում։ Այսպէս՝ օրինակ՝ վերջերս Ղարաբաղի բոլոր յայտնի շուկաներում ադմինիստրացիայի կողմից կենսական մթերքների վերաբերմամբ սակագին է եղել որոշված, որպիսի սակագինը պարտաւորեցուցիչ է եղել թէ վաճառողի և թէ գնորդի համար. թւում է, թէ նպատակայարմար միջոց է այդ՝ թանգութեան առաջն առնելու համար։

Սակայն բանից դուրս է եկել, որ այդ միջոցը սպասված արդիւնքը չէ ունեցել, որովհետև յաջորդ անգամ վաճառելու մթերք չէ երևացել շուկաներում, և գնորդը ստիպված է եղել գնալ գիւղերը՝ աւելի թանգ գնով ալիւր ու ցորեն առնելու, ի հարկէ, գաղտնի կերպով։ Սրանից հետևում է այն, որ ադմինիստրացիան պէտք է ռեկվիզիցիայի ենթարկէ բոլոր կենսական մթերքների շտեմարանները և ապա նորմալ սակագնով վաճառէ հասարակութեանը։ Այդ է միակ արմատական միջոցը մեր իրականութեան մէջ։

Այլապէս միամտութիւն կը լինի կարծել, թէ մեղմ միջոցների դիմելով կը վերանան սպեկուլեանտների շահատակութիւնները։

Ներկայումս անհրաժեշտ կենսական մթերքների գները հետևեալն է. ցորենի պուդը 3 ր. 40 կ.— 3 ր. 60 կ., կորեկի պուդը 2 ր. 40 կ., տեղական ալիւրի պուդը 3 ր. 60 կ.—3 ր. 80 կ.։

Սակայն մի հանգամանք ևս կայ, որ չը պիտի վրիպէ մեր ուշադրութիւնից։ Ներկայումս Ղարաբաղի գիւղերի մեծ մասում աշնանացանքս չէ արվել չորային եղանակների շնորհիւ. ահաւասիկ դեկտեմբեր ամսումն ենք, բայց դեռ ևս վարելահողերը մնում են առանց հերկելու։ Այսպիսի տարում, երբ բնութիւնը իր քմահաճոյքներին զոհ է դարձնում գիւղացու տնտեսութիւնը, թերևս հնարաւոր լինի մի կերպ մեղմացնել բնութեան հասցրած չարիքները, եթէ ունենանք գիւղացու շահերը իր սրտին մօտ ընդունող ագրոնոմներ։ Դժբաղդաբար այդպիսի ագրոնոմներ չը կան Ղարաբաղում։ Ճիշդ է, զեմստվօյի կողմից ռայօնային ագրոնոմներ կան նշանակված, որոնց պարտականութիւնն է՝ շրջել գիւղից-գիւղ, գիւղատնտեսական գիտելիքների համար դասախօսութիւններ կարդալ, փորձնական դաշտեր հիմնել և այլն, սակայն ահա երկրորդ տարին է, ինչ հաստատվել են յիշեալ ագրոնոմները մեզանում և ոչ մի շօշափելի արդիւնք չեն տուել, ոչ մի բարեփոխութիւն չէ մտել գիւղատնտեսական կեանքի մէջ։ Գուցէ մեզ առարկեն, թէ պատերազմի հետևանքով առաջ եկած աննպաստ պայմանների շնորհիւ է այդպէս, սակայն ո՛չ. գլխաւոր պատճառն այն է, որ մեր յարգելի ագրոնոմները ժողովրդի մարդիկ չեն, զուրկ են ալտրուիստական ձգտումներից, գիւղացուն օգնելու գաղափարով չեն տոգորված։ Մենք ճանաչում ենք ագրոնոմներ, որոնք երկու տարվայ ընթացքում չեն բարեհաճել ծանօթանալ իրանց յանձնված ռայօնների գիւղերի հետ։

Եւ ի՞նչ կարելի է սպասել այդպիսի ագրոնոմներից, որոնք միայն անունով գոյութիւն ունեն։

Եւ լաւ կը լինէր, եթէ մեր նահանգային ագրոնոմը ռայօնական ագրոնոմներ նշանակելիս ի նկատի ունենար վերջիններիս ոչ միայն համալսարանական դիպլոմները (որոնց արժէքաւոր լինելը չենք ժխտում ի հարկէ), այլ և ի նկատի ունենար նրանց բարեխղճութիւնը, թէ արդեօք նուիրված են իրանց պաշտօնին, շահագրգռված են գիւղացու տնտեսական առաջադիմութեան գործով և կարող են արդեօք արդարացնել իրանց վրա դրված յոյսերը։

Պէտք է նշանակել այնպիսի մարդկանց, որոնք չը բաւականանան սոսկ պաշտօնական գրագրութիւններ անելով, այլ ձեռնհաս լինեն իրական գործ կատարելու։

Մեր ագրոնոմները չը պէտք է Պառնասի բարձունքից նայեն գիւղացիների վրա, ինչպէս անում են ոմանք, այլ պէտք է ժողովրդի մէջ մտնեն, ուսումնասիրեն նրա հոգեբանութիւնը և ապա որոշեն իրանց գործելակերպը։ Պէտք է օրինակ վերցնել հանգուցեալ Ալ. Քալանթարը, թէ ինչպիսի եղանակով էր նա գործում և ինչքա՜ն մեծ վստահութիւն էր ձեռք բերել ժողովրդի մէջ։

Եւ մենք կարծում ենք, որ մեր գիւղացիները տնտեսական արդի վիճակին չէին հասնի, եթէ մեր մէջ գործէին հանգուցեալ Քալանթարի տիպի մարդիկ։

Ա. Ասլանեան

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Կ. Հ. Բարեգործական Ընկ. Ղարաքիլիսայի ճիւղը հեռագրով խնդրում է բուրդ ուղարկել փախստականների համար վերմակներ պատրաստելու և 1000 ր. փախստական-դպրոցականների համար տօների առիթով զգեստներ պատրաստելու։

—

Էջմիածնի «Եղբայրական օգնութեան» նախագահ Գարեգին վարդապետը հեռագրում է Կենտրոնական Կոմիտէտին. «Որբերի թիւը օրէցօր աճում է. ապաստարանները լցված են։ Երբ կարելի է Թիֆլիս ուղարկել 200 որբ»։

—

Ներսէս եպիսկոպոսը և Ս. Տիգրանեանը հեռագրում են Կենտրոնական Կոմիտէտին. «Անհրաժեշտ ենք համարում անմիջապէս Կովկաս փոխադրել 50 որբ. հաղորդեցէք՝ որտեղ կարելի է տեղաւորել նրանց»։

—

Քաղաքների Միութեան Կովկասեան կոմիտէտի անդամ գեներալ Ե. Թամամշեանը առաջարկել է Քաղաքային Կենտրոնական կոմիտէտին կից գործող կանանց կոմիտէտին պատրաստել 6,500 դօշակի և նոյնքան էլ բարձի մթեներ։

—

Հ. Կ. Կոմիտէտը ամսիս 21-ի իր նիստում կայացրել է հետեւեալ որոշումները. 1) Թիֆլիսում գտնված փախստականներին նպաստ տալ մինչև ամսիս վերջը, որովհետև կոմիտէտի միջոցները սպառվում են, և նրանց առաջարկել կառավարութեան առաջադրութեամբ հեռանալ Թիֆլիսից մի այլ տեղ, ուր կարող են ստանալ կառավարական նպաստ։ 2) Իշխանուհի Մ. Թումանեանի հովանաւորութեան տակ գտնվող գաղթականական արհեստանոցին յատկացնել 500 ր.՝ գործիքներ գնելու։ 3) Թիֆլիսում, Մեծ-Ղարաքիլիսայում և Դիլիջանում յարմար շէնքեր որոնել նոր որբանոցներ բանալու։ 4) Փախստականների համար գնել 5000 զոյգ գուլպայ։ 5) Ընդունել Փոխարքայի դիւանատան առաջարկը՝ վերջինիս միջոցներով գնել 100—150,000 ր. տաք իրեր գաղթականների համար։ 6) Բաթում ուղարկել 1500 ր. բաթումաբնակ գաղթականների հագուստի համար։ 7) Տաբախմէլայում վարձել Ա. Ղազարեանի տունը տարեկան 1800 ր.՝ որբանոց բանալու։ 8) Մ.-Ղարաքիլիսա ուղարկել 20 պուդ բուրդ՝ վերմակների համար և 5000 ր. դրամ փախստական-որբ դպրոցականների համար Ծննդեան տօներին հագուստ գնելու։

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ
ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Կանայք արդէն ձմեռային աշխատանքն են շարունակում ապաստարանում, թել են մանում, գուլպայ գործում, աղջկերքը եզրեր, շղարշներ են գործում։ Երեխաները Հրատապ Սփոփանքի «Վասպուրական» վարժարանը Ղ. Աղայեանի դասագրքերով կարդում, գրում, երգում։ Ջառամեալները կրակի շուրջ յիշողութիւններով են փոխանակվում, իսկ տողերս ընդհատում եմ, որովհետև ապաստարանիս բժիշկ Յովհաննէս Միրաքեանը ընդհատել տուեց, հեռախօսով աւետելով՝ որ ծննդաբերական ապաստարանն ուղարկված Հայկանուշը բարեբեր ծննդաբերեց ջուխտակ՝ մի տղայ և մի աղջիկ։

Ստացված են նուէրներ.

Դրամով՝

Սահակ ք. Սահակեանից (ամսական) 3 ր., Սարգիս ա.-ք. Շիօյեանից 50 ր., որ նուիրաբերել են իր ծխականներ եղբ. Ս. և Խ. Ալէքսանդրեան Փիրղուլեանները ի յիշատակ իրանց նորոգ հանգուցեալ մօր՝ Սոփիա Փիրղուլեանի հոգեհացի փոխարէն, տիկին Դարիա Յովհաննիսեանից 3 ր., Աստուածատուր Աւետիսեան Յարութիւնեանից 3 ր., Յարութիւն Օհանեանից 12 ր. («Գիժ Վիլհէլմ» գրքի վաճառքից), տիկին Արքեպիսկոպոսեանից 5 ր., Ոմնից 1 ր., Թիֆլիսի տրամվայի վերահսկիչներ՝ Սիմէօնեանից և Յարութիւնեանից 258 ր., գումարված Թիֆլիսի տրամվայի վրա (բոլոր ազգութիւններից անխտիր) ծառայողներից։ Նուիրատուների ցուցակը մնացորդ (հանգանակութիւնը շարունակվում են) գումարի հետ կը տպագրվի։ Նոր Նախիջևանից՝ Ալէքսանդր Արքելեանից (կրկին) 6 ր., Բ. Իշխանեանի «Աղէտի աշխարհից» գրքերի վաճառքից գոյացած։ Տաթևից սիւնեաց հօտի փոխանորդ Վահան վարդապետից 15 ր., Ախալքաղաքից՝ Վ. Տէր-Օհանեանից 20 ր., Մեշեդիսէրից՝ եղբ. Յարութիւնեաններից 10 ր.։

«Тифлисскій Листокъ» լրագրի միջոցով Աւետիս Ս. Ծգնաւորեանից 100 ր., ժողովված Միքայէլ Արամեանի Գօլովինսկի պր. և Բարեատինսկայա փող. անկիւնի նորակառոյց շինութեան վրա եղողներից։

Տեղական միւս հայ օրագրի միջոցով Ախալքաղաքից՝ Յ. Զ. Սուլխանեանից 50 ր.։

«Մշակի» միջոցով

«Մշակ» № 277—10 ր., № 279—10 ր., № 280—40 ր., № 282—36, № 283 19 ր. 40 կ.։

Տ. Նազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Շնորհակալութեամբ ստացանք Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիւանատան կողմից Նորին Վեհափառութեան հրամանով խմբագրութեան նուէր ուղարկված Էջմիածնի օրացոյցից 2 օրինակ 1916 թ.։

◆ Պետրոգրադից վերադարձաւ սենատոր Ն. Լ. Պետերսոնը։

◆ Ծննդեան տօների պատճառով արձակվեցին Թիֆլիսի բոլոր դպրոցների աշակերտ-աշակերտուհիները։

◆ «Кавк. Сл.»-ն յայտնում է, որ Երևանի փոխ-նահանգապետ Ա. Ե. Ստրելբիցկին նշանակվում է Երևանի նահանգապետ։ «Баку»-ն յայտնում է, որ Բագուի քաղաքապետ Պ. Ի. Մարտինովը նշանակվում է Չէրնօմօրեան նահանգապետ. իսկ Բագուի նահանգապետ Վ. Վ. Ալիշևսկին—Փոխարքայի խորհրդի անդամ՝ Վ. Ն. Օսեցկիի տեղ։

◆ Պետ. Դումայի անդամ Միք. Պապաջանեանը, որ գնացել էր Երևանի և Գանձակի նահանգները փախստականների դրութիւնը ուսումնասիրելու համար, երէկ վերադարձաւ Թիֆլիս։

◆ Երէկ առաւօտեան Թիֆլիս ժամանեց Նեստորականների պատրիարք, ասորական ժողովրդի գլխաւոր հովիւ Մար-Շիմօնը։

◆ «Ջիթենի» գրական ժողովածուի համար պ. Լևոն Մանթաշեանը նուիրել է 500 րուբլի այն պայմանով, որ այդ գումարով 200 հատ «Ջիթենի» ուղարկվի իր կողմից նուէր մեր ազգային գաւառական և գիւղական զանազան դպրոցական հաստատութիւնների և գրադարանների։

◆ Թիֆլիսի վաճառականութեան աւագ Արշակ Միքեան Ծննդեան և Նոր-Տարուա առաջիկայ տօների պատճառով, սովորական այցելութիւնների փոխարէն, իր մօտ և վաճառականական կամերայում ընդունում է նուիրաբերութիւններ յօգուտ սնանկացած վաճառականների և սրանց ընտանիքների։

◆ Դեկտ. 22-ին № 40 հիւանդանոցն են մտել խօլերայով հիւանդ 2 հոգի։

◆ Սկարլատինայի տարածման պատճառով սանիտարական յանձնաժողովի նախագահ Գ. Գ. Ալիբէգեան դիմել է քաղաքային վարչութեան, միջնորդելով, որ ծննդեան տօներին արգելվի հասարակական տօնածառ սարքել, ուր կարող են երեխաներ խմբվել և վարակումը անխուսափելի կը լինի։

◆ Թիֆլիսի Բուսաբանական այգին Բագուի Հայոց Կուլտուրական Միութեանը տուել է 15,900 երեք տարեկան թթենի ծառեր, որ Միութիւնը ձրիաբար բաժանի Բագուի և Գանձակի գիւղացիներին։ Այդ ծառերը անցած շաբթին ուղարկվեցին Քիւրդամիր և Եւլախ կայարանները։

◆ Դեկտ. 20-ին Թիֆլիսում ստացվեցին հետեւեալ մթերքները. ալիւր 6 վագօն, կաղամբ 1 վ., վառելափայտ 6 վ., միրգ 476 պ., նաւթ 9 վ., մազութ 4 վ., բենզին 1 վ. և գինի 2 վագոն։

◆ Մեզ խնդրում են տպել, որ անգուցեալ Կարապետ եպ. Տէր-Մկրտչեանի յիշատակը յաւերժացնելու համար նոյ. 28-ին Գայանեան օր. դպրոցում հանգուցեալի Թիֆլիսաբնակ աշակերտներից և յարգողներից մօտ 50 հոգու մասնակցութեամբ գումարվեց մի ժողով, ուր ընտրվեց մի յանձնաժողով բաղկացած 6 հոգուց, այն է պ. պ. Մ. Արեղեան Մ. Բերբերեան, Մ. Խոստիկեան, Ս. Կանայեան, Սահակ քահ. Սահակեան և Մ. Քալանթարեան։ Յիշեալ յանձնաժողովը իր միջից նախագահ ընտրեց պր. Մ. Բերբերեանին, գանձապահ՝ պ. Մ. Քալանթարեանին, իսկ քարտուղար Մ. Խոստիկեանին։ Այս որոշեց թերթերի միջոցով դիմել հանգուցեալ սրբազանին յարգող բարեկամներին և աշակերտներին և առհասարակ երախտապարտ հայ հասարակութեանը՝ նուիրաբերութիւն անել և ուղղել այն «Մշակի» խմբագրութեան և կամ Тифлисскій Купеческій Банкъ-ի հաշւով՝ յանձնելու այն յանձնաժողովիս գանձապահ պ. Մկրտիչ Քալանթարեանին։ Յանձնաժողովը մտածում է, նայած նուիրաբերված վերջնական գումարին, հանգուցեալ սրբազանի անցեալ գործերից մի կամ մի քանի հատորներ լոյս ընծայել նրա կենսագրականով միասին և կամ նրա յիշատակին նուիրված մի գրական գիտական ժողովածու հրատարակել։

ԳԻՏՈՒԹ.. ԳՐԱԿԱՆ.. ԳԵՂ ԱՐ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայկական Ներկայացում

Ամսիս 21-ին, երկուշաբթի, հայկական ներկայացմանը դերասանական ընկերակցութիւնը բեմ հանեց Շանթի բազմիցս խաղացված յայտնի «Հին-Աստուածներ» դրաման, 12 պատկերով։ Այս անգամ այդ դրաման, ինչպէս նախօրօք յայտարարված էր, ներկայացվեց լրիւ, առանց կրճատումների։ Սակայն, ինչպէս երևում է, «Հին-Աստուածներ» դրաման դեռ չի աջողվի երկար ժամանակ տեսնել ներկայացված կատարեալ ամբողջութեամբ։ Այս անգամ թէպէտ և պիէսի խաղը չունեցաւ գրեթէ կրճատումներ, սակայն չէր պահպանված բնագրի լեզուն, այսինքն արևմտեան բարբառը։ Ի հարկէ դժուար է պահանջել մեր դերասաններից, որ նրանք կատարեն իրանց դերերը արևմտեան բարբառով։

«Հին-Աստուածների» ժողովրդականութիւնը շատ մեծ է. ամեն թատերաշրջանին ներկայացվում է մի քանի անգամ և միշտ էլ գրաւում թատրոն մեծ թւով հասարակութիւն։ Այս անգամ էլ թատրոնը լիքն էր հասարակութեամբ, որը լարված ուշադրութեամբ հետևում էր խաղին և ծափահարում գլխաւոր դերակատարներին։ Հասարակութիւնը շատ լաւ գիտէ թէ պիէսի բովանդակութիւնը և թէ հայ դերասանների խաղը առ հասարակ, քանի որ հայ դերասանական բոլոր խմբերն էլ թէ մեզ մօտ և թէ գաւառներում շարունակաբար խաղացել են և շատ էլ կարդացվել է լրագիրներում պիէսի և խաղի մասին։ Այս անգամ յատուկ պատրաստութեամբ բեմ հանված «Հին Աստուածներ» պիէսի կազմը ամենից առաջ աչքի ընկաւ դերերի անպայման լաւ սերտողութեամբ. ոչ մի լեզուական սայթաքում, որ սովորական բան է հայկական ներկայացումներին, այս անգամ տեղի չունեցաւ։ Երանի թէ ամեն անգամ դերերը այդպէս լաւ սերտէին մեր դերասանները։

Շատ լաւ էր տ. Սիրանոյշը իշխանուհու դերում. կարելի է ասել, որ այդ դերի ամենաաջող կատարողն է տ. Սիրանոյշը, որ խաղում է բնագրի հարազատ լեզուով։ Տիկ. Սևումեանը Սեդայի դերում հաւասար աջողութեամբ չէ տանում, տպաւորիչ է «Իջէք, իջէք, երազներ»-ի տեսարանը։ Պ. Ալիխանեանը աբեղայի դերը, ինչպէս միշտ, տարաւ շատ սահուն, սակայն ցանկալի է, որ այսուհետև խաղալիս մտցնի խորութիւն և աւելի ուժգնութիւն աբեղայի հոգեկան ապրումների և նրա յոյզերի բուռնկումների մէջ։

Շատ տպաւորիչ էր, թէ արտաքինով և թէ խաղով, պ. Աբէլեանը քրմապետի դերում։ Այս անգամ պ. Սևումեանը աւելի աջող ու ուժգին խաղաց վանահօր դերը, քան թէ առաջ։ Միւսները պահպանեցին ներկայացման աջողութիւնը իրանց սերտած դերակատարութեամբ։

Առհասարակ այս անգամ պատւով դուրս եկան մեր դերասանները մեր այժմեան ռեպերտուարի զարդը կազմող «Հին Աստուածներ» պիէսի ներկայացումից, թէպէտև լոյսի էֆֆեկտների և արևի ծագման և այլ տեսարանների նկատելի էին թերութիւններ։

Եանուս

—

Ժողովրդական Տուն

Դեկտ. 20-ին, կիրակի, Հայկական Դրամատիկ Խմբակցութիւնը Զուբալովի անուան Ժողովրդական Տանը հերթական ներկայացմանը բեմ հանեց «Յոյսի կործանումը» 4 գործ. դրաման, հեղինակութիւն Հէյերմանի և թարգմ. Մ. Սամբօլցեանի։ Պիէսի նիւթը վերցված է բանուորների, նաւաստիների կեանքից, որոնց շահագործում են նաւատէրերը և զոհ դարձնում՝ տանելով ծովերը փոթորիկի ժամանակ։ Այդ զոհերը թողնում են ընտանիք անօգնական ու աղքատացած։

Թատրոնը լցրած հասարակութիւնը տեսաւ մարդկային շահագործութեան և թշուառութեան մի նոր տեղական բնոյթ կրող ձևը։ Ծովափնեայ վայր, ձկնորսի ու նաւաստի միջավայր, միւս կողմից կապիտալիստ նաւատէր իրան յատուկ բոլոր արտաքին և ներքին ատրիբուտներով։ Ներկայացումը խաղի կողմից գոհացուցիչ էր, երբ մանաւանդ ի նկատի առնենք դերակատարների սիրող-սիրողուհի լինելը, որոնք ամենայն անձնուիրութեամբ ծառայում են ժողովրդական թատրոնի վեհ գաղափարին։

Եանուս

ՄԱՄՈՒԼ

Մենք յայտնեցինք, որ կիրակի օր Թիֆլիսում սկսեց հրատարակվել «Համբաւաբեր» անունով հասարակական գրական մի նոր շաբաթաթերթ։ Արդեօք այս թերթը պաշտօնական օրգանն է Կ. Հ. Բ. Ընկերութեան, թէ միայն նրա ծախքերով է հրատարակվում, դժուար է հասկանալ, որովհետև թերթի ճակատին պարզ գրված չէ, թէ օրգան է Կ. Հ. Բ. Ընկ., այլ ասված է «հասարակական-գրական շաբաթաթերթ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան»։ Սրանից կարելի է միայն եզրակացնել, որ թերթի հրատարակութիւնը միայն պատկանում է Ընկերութեան, ուրիշ ոչինչ։ Եւ եթէ նայելու լինենք նոր շաբաթաթերթի բովանդակութեան, այդտեղից տարօրինակ տպաւորութիւն կը ստանանք։ Թերթի մէջ ամեն տեսակ յօդուածներ և տեղեկութիւններ կան—աւելացնենք՝ անխտիր, պատահական, պիտանի և անպիտան—բայց այն, որ պէտք է կազմէր թերթի իսկական նպատակը, այն է լինել օրգան և արտայայտիչ Կ. Հ. Բարեգ. Ընկերութեան գործունէութեան, այդ մասին մի խօսք անգամ չէք գտնի։ Վերցրէք կիրակի օրվայ մեր բոլոր օրաթերթերը, շաբաթաթերթերը, նոյն իսկ օտար լեզուներով հրատարակվողները, և դուք այդտեղ կը գտնէք աւելի կամ նուազ չափով տեղեկութիւններ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան և նրան կից գտնվող Կենտրոնական Կոմիտէտի, մասին մանաւանդ փախստականների մասին, որ օրվայ հրատապ հարցն է կազմում, բայց այն շաբաթաթերթը, որ հրատարակվում է Կ. Հ. Բ. Ընկ. հաշւով, ոչ միայն որևէ տեղեկութիւն չէ հաղորդել իր առաջին համարում իր Ընկերութեան, ոչ միայն զլացել է մի ամփոփ տեղեկութիւն տալ իր գործունէութեան մասին փախստականների վերաբերմամբ, այլ զլացել է նոյն իսկ հասարակ լուրեր հաղորդել։ Անշուշտ, այս ամենը մի բան է ցոյց տալիս, այն, որ շաբաթաթերթը մտադիր է լինել ոչ թէ օրգան գլխաւորապէս Բ. Ընկերութեան համար, այլ հասարակական շաբաթաթերթ, որ, գուցէ, ի միջի այլոց, զբաղվելու է և Բարեգ. Ընկերութեան գործերով։ Դժուար թէ Ընկերութեան անդամները համակրութեամբ վերաբերվեն այդպիսի դրութեան։

Տեղական թերթերից մէկը, «Тиф. Листокъ», խօսելով նոր թերթի մասին այն միտքն է յայտնում, որ արդարացի չէ բարեգործական նպատակների յատկացված գումարներով թերթ հրատարակել, մանաւանդ ներկայ ժամանակում։

Գալով թերթի բովանդակութեան, պէտք է ասել, որ այդ բովանդակութիւնը մեզ ոչ մի հնարաւորութիւն չէ տալիս ոչ մի կարծիք կազմել շաբաթաթերթի ոչ ուղղութեան, ոչ կերպարանքի մասին։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝
№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բօրժօմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝
№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բօրժօմից — 7 ժ. 3[illegible] ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Դուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ԱՄԵՆ օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄՈՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և [illegible] հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Ե. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեխ., հիւանդ. և [illegible] բաժ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոն-սիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—226

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հարկաւոր են
Էլեկտրական կայարանի համար
Աշակերտներ
16 տարեկանից ոչ պակաս։ Ռոճիկը 15 ր. ամսական։ Դիմել՝ Ольгинская улица № домъ Меликъ-Азарьянца. 941. 1-1

ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО,
ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3,
ВЕРХНІЙ ЭТАЖЪ.

Нива
Еженедѣльный иллюстрированный журналъ,
ОТКРЫТА ПОДПИСКА НА 1916 г.
ПОДПИСЧИКИ ПОЛУЧАТЪ:
52 №№ журнала: повѣсти, разск., картины, рисун. въ краск., иллюстраціи съ театра военн. дѣйствій.
52 КНИГИ, отпечатаныя четкимъ шрифтомъ, въ которыя войдетъ:
12 книгъ ежемѣсячн. журнала „ЛИТЕРАТУРНЫЯ и ПОПУЛЯРНО-НАУЧНЫЯ ПРИЛОЖЕНІЯ".
40 книгъ „Сборника Нивы", содержащихъ:
ВТОРУЮ СЕРІЮ ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ
Д. Н. МАМИНА-СИБИРЯКА.
ПОЛНОЕ СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ
Н. Г. ГАРИНА-МИХАЙЛОВСКАГО.
НОВЫЯ посмертныя сочиненія А. П. ЧЕХОВА.
Романъ Шарля Де-Костера: „БИБЛІЯ БЕЛЬГІИ" („Уленспигель"
2 новыя спец. карты театра воен. дѣйствій двухъ фронтовъ: западнаго (русскаго) и западно-европ., подъ ред. проф. Ю. М. Шокальскаго,
12 №№, Ежемѣсячныхъ новѣйшихъ модъ",
12 листовъ выкроекъ и рисунк. рукодѣльн. работъ.
1 „ОТРЫВНОЙ ЕЖЕМѢС. КАЛЕНДАРЬ" на 1916 годъ
ПОДПИСНАЯ ЦѢНА «Н И В Ы» со всѣми приложеніями на годъ:
Въ Петроградѣ Безъ доставки 8 р. 50 к. Съ доставкою 9 р. 50 к. Съ перес. по всей Россіи 10 р. Допускается разсрочка.
Новые подписчики, желающіе получить первую серію (18 кн.) Мамина-Сибиряка, доплачиваютъ 3 р. 50 к., съ перес. въ Европ. Россіи.
Адресъ: Въ контору журнала „НИВА", Петроградъ, улица Гоголя, № 22.
(2.) 903. 4—3

12 КНИГЪ.
ОТКРЫТА ПОДПИСКА
на 1916 годъ.
(4-й годъ изданія)
7 руб. ВЪ ГОДЪ
НА ЕЖЕМѢСЯЧНЫЙ ЛИТЕРАТУРНЫЙ, НАУЧНЫЙ И ПОЛИТИЧЕСКІЙ
ЖУРНАЛЪ
„СѢВЕРНЫЯ ЗАПИСКИ",
издаваемый въ Петроградѣ.
Въ 1916 году журналъ будетъ издаваться по прежней программѣ и при уча-стіи прежнихъ сотрудниковъ въ отдѣлахъ художественной литературы (беллетристика, стихи), литературной критики, искусства, театра, науки, филисофіи, религіи, полити народнаго хозяйства.
ПОДПИСНАЯ ЦѢНА на журналъ
съ пересылкой на годъ 7 р., на 6 мѣс. 4 р., на 3 мѣс. 2 р. 25 к., за границу на г 10 р. ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ главной конторѣ журнала: Петроградъ, Загород-ный пр., 21, въ крупныхъ книжныхъ магазинахъ и во всѣхъ почтовыхъ учрежденіяхъ
Книжные магазины за комиссію удерживаютъ 5%.
Отдѣльные номера для ознакомленія высылается по 60 коп., наложеннымъ платежомъ 75
(2.2.) 911. 4—4 Издательница С. И. ЧАЦКИНА.

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.